Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված Գրքամոլ-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2015 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ՀՈՒԼՈՍ ՄԱՏԵՎՅԱՆ

Հուլսա Մատևյանի «Մորեղ» նոր ժողովածուն ընդգրկում է Հեղինակի վերջին տարիների գրած նոր պատմվածքները։ Մատևյանի խոհարարությունը կարճ պատմվածքների ձևս։

ՋՈՒԼԵՏ ՄԱՏԻՆՅԱՆ

ՄՈՐԵՆԻ



«ԽՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976

Ар 2
Ա 33

Ա $\frac{70303\ (4070)}{701\ (01)\ 75}$ 75 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1976

ԵՐԵՎԱՆ

Այսօր մաքուր մայթերը համբուրել եմ ուզում, և սիրտս պայթում է ճիչերից. ահա խաղում են մանկիկները, և ձմեռվա դատարկ բակերը լցնում են իմ մեջ գարնանային համբույր: Արևը գալիս է մեկ քաշվելով, մեկ տնավարի. փողոցի ազմուկը կնգուն է: Պատշգամբները օրհներգվում են. կանայք իրենց փրփուր լվացքն են երգի հետ փռում: «Պլանի տակ» ընկած տներից պառավները դուրս են եկել, որ հին հոգոցով փլվող պատերը կանգուն պահեն: Զահելները խենթ, սիրային երգեր են երգում: Հողահոտը լցվում է ամենուր:

... Շնչում եմ, հողը շարժվում է: Ուզում եմ այնպես շնչել, որ հողը չհուզվի. չի լինում: Ես նրա մեջ եմ, և փնտրում եմ ինձ: Բայց ձեռքերս հող են և հող են շոշափում՝ ճաքած, տրորված, հայրենական...

Ես շռայլ մի աշխարհ եմ տեսնում. որին երապել են պապերը, և որի պատվանդաններին միայն արևներ են բաղված. կանգի մի ներդաշնակ ղողանջ հավատի պես լցվում է հոգիս: Ես պարուրվել եմ երանությամբ...

ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՊԱՐՏՎՈՒՄ ԵՆ

Առաջ, շատ-շատ առաջ, մշուշի մեջ, լողում էին տների կարմիր տանիքներն ու մարդկային կանչեր: Կանչերը, խառնըվելով շան հաչոցներին՝ կտրում էին կեսգիշերն ու վառում մի քանի մոլորված լույս: Պապենական սնդուկները ապատվում էին հնոտիքից: Ծլնգան դույլերն ու ցանկապատերի մոտ սահող ահավոր ստվերները լուռ ու մունջ չքանում էին ցանկապատի ճաղերի տակ:

Գնում էինք մորի հավաքելու:

Շները հորանջում էին ցրտից ու անքնությունից. գյուղը շարական էր կեսգիշերի շուրթին:

Մոլորված լույսերը հատնում էին տեղնուտեղը. խավարը սրթսրթալով արահետ էր բացում:

... Խավարը քչախոս է, նա ուժը պահում է իր մեջ և գողանում է ուրիշի ուժը: Բայց խավար կա օրհնելի է, եթե լույս արահետ ունի համփորդի համար:

Թաղի տղա ու աղջիկ շատախոսում էինք մինչև աքլորա-

կանչ. աքլորն իր կանչով արթնությունն էր գյուղի: Գիշերային անտառի եզրը խորհրդավոր դուռ էր, ծառերից վիշապներ էին կախված:

— Չէ-մի,— դողը կապելով ցրում էր տարեցը, և գնում էինք «ոսկի» որոնելու: Ոսկին մորի էր կարմի՛ր, հյութեղ և սիրում էր վաղնջական առավոտվա թափանցիկությունը:

Բացատի խոտի դեզերը թխկան հավի պես կանչում էին, և մենք ճուտիկների նման բնատեղ էինք սարքում: Խոտը բուրում էր այնպես նապանքով ու թաց: Սկսվում էին իսկական հեքիաթները՝ սարսափի ու ապահովության մասին: Կրտսերի աչքերը դուրս էին ցայտում բիբերից: Տարեցը հոգնած ննջում էր, նրա կզայարանները սրվել-մաշվել էին: Խոտի բուրմունքը գիշերային հավքերի ղուն-ղունի ու անտառի բվվոցի հետ՝ Ադամի ու Եվայի դրախտն էր: Եվ բոլոր սարսափների մեջ սեր կար, մարմին կար, արյուն ու դող: Մեր սերը կտրկստած շորատակից թպրտում էր, ոնց որ մոխրի տակ քնած անթեղ:

... Բնապդն անթեղ է, կենդանի հուր, որ ապրում է ամեն մեկիս մեջ, որ ապրեցնի մեզ:

Կրտսերի աչքերը վառվում էին անհասկանալի հուզմունքից՝ կողքի պատանյակը ծուպավոր տրեխներով ու հոր մեծ շալվարով, ծիծաղկոտ պատմություն էր: Գիշերը աստղոտ էր և մեր աստղը նրա մեջ կախված, որ ընկնում էր ցած. մինչև հիմա էլ մարդիկ մեկ-մեկ ընկնում են աստղերի նման:

— Վեր կացեք,— խռպոտ տարեցը կիսատ էր թողնում մի հեքիաթ:

Դժկամությամբ թողնում էինք դեզերի տաք բները և գնում բացատ. բացատը մորու մարտահրավեր էր:

Լուսաբացը ցրում էր իր մշուշները և կենդանացնում անտառի կմախքը: Արևից տաքացած փոքրիկ Զատիկները, որ նստում էին մեր վրա՝ հոսում էին մեր մատների վրայով ու թռչում, իրենց հետ տանելով մեր կյանքի նախշուն հիացմունքը...

... Մինչև հիմա էլ մեր կյանքի հմայքը մեր վրայով թռչում է: Դույլերը, որոնք անհուսորեն ընգացել էին գյուղից մինչև անտառ՝ լցվում էին հյութեղ կարմիրով: Արևն սկսում էր «կծել»: Տարեցը օգնում էր Կրտսերին դույլը լցնելու. նա հիմա

չար չէր: Դույլերը շարվում էին կածանի երկայնքով, ուր փոսիկի մեջ փայլում էր մի բուռ ջուր, իսկ հատակը ոսկի էր՝ դեղին տերև: Առաջինը խմում էր Կրտսերը՝ բռերով կում-կում: Հետո հանդարտվում էր ջրի երեսը, հետո մեկելը, մյուսը...

Ոչ մի տեղ այնպես սրտահույզ ու կերկերուն չէր երգը:

Տեղին էր երգը փոքրիկ «հարս ու փեսաների» ու անիրական «հարս ու փեսաների» համար:

Ոչ մի լռություն այնքան խոսուն չէր, որքան անտառում: Ականջներս դառնում էր նրբազգաց, մարմիններս՝ ձայն ու շշուկ, սերը՝ շնչառություն: Իսկ մեկնից քիչ հեռու, կամ այնտեղ, ուր քիչ առաջ մենք էինք՝ մորու թփերը մերկացել էին, նրանց պճնանքը թափվել էր և գլխիկոր կանգնել էին արևի տակ: Անտառը խոշտանգվել էր. մի մեծ սիրտ ճմլվում էր հեռուներում:

Հեքիաթները չքացել էին, մնացել էին թփերը, և անտառային հաստ ծառերից էլ վիշապներ չէին ճոճվում:

Թփերը տխուր էին, դժգույն, և առավոտը նրանց՝ չարագույժ էր:

Օ, մորահավաք, մանկության կարմիր հուշ:

... Հեքիաթները մորաթափ թփեր են կյանքի կածաններում:

Բացատը մնում էր խոշտանգված՝ դեկերի մույթ բներով: Հոգնությունը... կամ անանուն մի բան մեկ տխրեցրած՝ մեր քարավանը շարում էր դեպի գյուղ:

Տանիքների կարմիրը շիկացած արևի տակ՝ կանչում էր... գյուղը հաց էր և բարեկամ: Երդիկները կյանքի ծուխ էին: Կեսօրը արթնություն էր և սպասում:

Մորին բակմում էր տների մեջտեղը, թարմ մորահոտը բռնում էր տան անկյունները:

Վաղուց է ինչ մշուշի մեջ չեն լողում տների կարմիր տանիքներն ու մարդկային կանչերը: Կանչերը չեն խառնվում շան հաչոցներին, կտրելով կեսգիշերն ու վառելով մի քանի մոլորված լույս: Սնդուկները ապատվել են հնոտիքից ու պապենականից:

Ցանկապատի մոտ սահող լուռ ու մունջ ստվերները չեն չքանում ցանկապատերի ճաղերի տակ: Եվ հեքիաթները, որ, գոտեմարտում են կյանքի հետ՝ պարտվել են:

ՊՈԵՏԸ ԲՈՂ ԳՐԻ ԻՐ ՍՈՆԵՏԸ

Ես որոշել էի աշխարհի բոլոր երգերի ամենալավ տողերից մի երգ հնարել, մի երգ, որ սուրբ լինի, ինչպես երջանկությունը:

Ինձ պետք էին ամենալավ երգերի առաջին ու վերջին տողերը միայն: Ուզում էի երիտասարդ մի պոետ գար, իսկ ես նվիրեի իմ երգը, որի ամեն շնչի մեջ նա է:

Այսօր հավաքույթի օրն է, բայց դեռ չեմ հնարել այդ երգը: Սոնան բերել է շորս՝ ամպանման ու նոր: Աշխարհը գունավոր է, և բոլոր երգերը խառն են:

— Ուզում եմ սուր ճոճել,— նոր կարած շորը շպրտելով, ասացի,— ես ատում եմ աշխարհի բոլոր հին ու նոր մոդաները:

— Դու լավն ես,— ասաց Սոնան:

Նա խղճաց ինձ. ես ավելի մենակ զգացի:

— Որովհետև աշխարհն էլ տեղ-տեղ...— չկարողացա խոսքըս ավարտել:

— Ռուլան, ծղոտե գլխարկն էլ կծածկես, քեզ շատ է սազում:

Զգացի, որ մեկը համբուրեց իմ մթնած աչքերը: Հետո հիշեցի հեռավոր մի պատմություն, որ չգիտեր Սոնան, սապատավոր ու անսապատ մեջքերի պատմությունը, որոնց նայել եմ ամեն օր, երբ քայլել եմ փողոցով: Մեջքեր, որոնց վրա կարդացել եմ շատ մտքեր:

Սոնան հակել է հայացքը: Լուսամուտը մի քառակուսի է, որի մեջ ներքաշվել է աշխարհը:

Մեջքը...

Տարիներ առաջ մեր հարևանը մեջքը դարձրեց մորս ու գնաց, որին հաջորդեց ամայությունը:

— Մայրիկ, ինչու՞ մեջքը դարձրեց:

— Գնալիս մարդու մեջքն է երևում, աղջիկս,— հոգոցով ասաց մայրիկը:

Ես օրենք դարձրի կարդալ բոլոր մեջքերի պատմությունը, մինչև որ դրան ավելացավ ժամացույցի ու կատակի պատմությունը:

Սոնան նստել է դողացող ձեռքերի մեջ նոր կարած շորը, և լռություն է կախվել նրա վրայից:

... Երբ տեսնում էի մեջքեր, մոտենում էի՝ պատրաստ ասելու ամենամտերմիկ բաները: Հասնում ու լռում էի. բառերս կորչում էին, որ հետո երգ դառնան:

Այո, այո,ես պետք է գնամ, լսեմ ինձ ձոնված տողերը, որ կարտասանի երիտասարդ մի պոետ, իսկ ես կերգեմ կարոտի իմ երգը:

Սոնան գնացել է:

Ժամացույցը...

Ուսանողական տարիներին այդ պոետը մի ժամացույց նվիրեց, ֆոսֆորե պլաքներով:

Իսկ ես ներշնչվեցի, թե նա ինձ խղճում է: Ատում էի, ուզում էի մոռանալ: Ես «հպարտ» էի խաղում: Մնում էր աշխարհը դիտել հանրակացարանի լուսամուտից ու երգել բոլոր ձևի ու լայնության, թիկնեղ ու ծռված մեջքերի երգը:

Երևի չեմ գնա երեկույթին, որովհետև իմ երգը պատրաստ չէ: Այդ օրերին Սոնան հաճույքով լարում էր իմ ժամացույցը, շաբաթը մեկ պոետը գալիս, կարդում էր իր վերջին սոնետը: Գնում՝ աչքերի մեջ տանելով իմ աչքերը: Ֆոսֆորե պլաքներով ժամացույցը մթան մեջ փայլում էր, ոնց որ լուսե սրեր՝ գիշերվա դեմ:

Ինձ տանջում էր խիղճս նրա սիրո համար: Թրջվում էր բարձս, որին ներկա էին լուսե պլաքները միայն: Ես ապրում էի իմ երգերով, և աշխարհը դառնում էր մի վերմակ ու բարձ, որ աշխարհի չափ փափուկ էր, երբ աշխարհում տոն էր:

Ես լսում եմ ժամացույցի երգը՝ չեմ հիշում պոետիս և նրա հայաբերորդ սոնետը:

Կատակը...

Ես կարդում եմ իմ փոքրիկ կյանքը, որ կոշտացած վշտեր ունի:

— Սիրտ իմ, դու էլ կոշտեր ունես քո վրա, մենք նման ենք:

Ես մեջքով շոշափում եմ պատը:

— Դու գեղեցիկ ես քո երգերի պես: Քո բոլոր երգերն էլ լավ են,— մի օր կատակեց Սոնան:

Ես կատակ հասկանալ չեմ կարող

Սոնան առանց «ցտեսություն» է գնացել՝ նա լավ աղջիկ է:

Նոր կարած շորն էլ ընկած է սեղանին՝ նոր շորեր ինձ պետք չեն: Ես վաղը անպայման կգրեմ այդ երգը՝ աշխարհի ու գեղեցկության մասին: Գիշերը նորից հիշեցի Արամ քեռուն, ու հեռացող մեջքը: Հիշեցի անմեղ կատակը, ֆոսֆորե իմ ժամացույցը...

Հիմա չեմ քնի, անկողնուս մեջ կծկված կհնարեմ իմ երգը՝ արտասովոր ու խոր, ամենալավը, որ երգել եմ մինչև հիմա:

Ես հասկացել եմ, որ լուսամուտի մեջ տեղ չի անի աշխարհը, որ աշխարհի տեղ-տեղ ցցված սապատները ոչ մի կերպ հարթել չի լինի, հին ու նոր մոդայի ոչ մի շոր ինձ չի սազի: Ինձ կսազի միայն այդ նոր երգը, որ սուրբ կլինի երջանկության պես:

Ես արդեն գրեցի այդ երգը. թող պոետը հիշելով ինձ՝ արտասանի իր սոնետը. ես նրան սիրում եմ: Եվ հետո՝ աշխարհում բացի իմ երգերից ուրիշ երգեր էլ կան:

ՊԱՏ, ՍԻՐԵԼԻՍ...

Երեխաները կամ պատերը պահմտոցի են խաղում: Պատերը կամ երեխաները հաշվում են.

— Մեկ, երկու...

Պարկապես գումարում են թվերը:

Ես ունեմ ծանոթ մի պատ: Ամեն օր այդ պատը ետ է տալիս իմ հայացքը: Իմ սենյակի պատն ու այդ պատը կրուցում են, երբ մենակ են մնում: Մութը շշնջում է.

— Պատ, սիրելիս:

Այդ շշուկը լսում է պատից այն կողմ կանգնած մի մարդ և ամոթխածորեն լռում է: Ամեն երեկո այդ պատի մոտ մի տղա սպասում է, ամեն երեկո մի աղջիկ վազեվազ գալիս է: Նրանք բռնում են միմյանց ձեռք ու լռում, պատերը՝ նույնպես: Լռում են մի րոպե, երկու... հետո էլ մոռանում են րոպեները: Աղջիկը մատով խաղում է պատից դուրս ցցված գաջի ծեփերի հետ. նա պատմում է իր գաղտնիքը, իսկ ծեփերը ծանոթ ու հին են և բամբասել չեն սիրում: Տղան բռնում է պատը շոյող աղջկա ձեռքը, աղջիկը կգում է մտերիմ հպում, և ասվում են բոլոր լավ բառերը:

Ես նայում եմ իմ լուսամուտից և մտածում եմ դիմացի պատի մասին, որ մենակ մնաց, երբ գնացին տղան ու աղջիկը:

Պատեր էլ կան, որ իրար հրում են ու տեղից չեն շարժվում, մինչև անձրև չի գալիս, քամի չի փչում, պատերից մեկը մի քիչ մերկանում է, ծեփերի գաջը մի քիչ թափվում է, հետո մնում է քարե մի կմախք, ու մի օր էլ գլգլոցով փլվում է:

— Մեռիր,— անտարբեր ասում է ապրող պատը, կամ չի ասում, որովհետև ոչ ոք չի լսում:

Պատերը ամեն ինչ լուռ են անում՝ քանի չեն ընկել. անձայն ապրում են, ձայնավոր մեռնում:

Կանգնած իմ լուսամուտի մոտ ինձ հաճախ թվում է լսում եմ բոլոր պատերի շշուկը, որ համաչափորեն միանում են:

— Պատ, սրիկա, սրիկա, սրիկա...

— Պատ, սիրելիս, սիրելիս, սիրելիս...

Ուզում եմ լսել միայն վերջինը, ու հոգիս մեծանում է: Այդ ձայնը քիչ դողդոջուն է ու շոյում է իմ ականջը: Ես հենվում եմ իմ սենյակի պատին: Բոլորը տեսնում են իմ դիմացի այդ պատը, հոգնած պահին հենվում, բայց երբ տխուր չեն՝ գնում են լուռ՝ պատի հետ թողնելով ստվերի պես մի լուռ բողոք:

Ես ուզում եմ աշխարհի բոլոր ավնիվ ու մենակ մնացած պատերին գրկել ու շոյել:

— Պատ, սիրելիս,— ասել, որ տխուր չմնան:

Պատեր կան, որ թաքցնում են սոսկահար շատ բաս...

— Ատում եմ թաքցնող ձեր դեմքը:

Բայց որովհետև ես չեմ ասում՝ այդ չար պատերը ծիծաղում են: Ծիծաղը կրկնում է.

— Այդպես եղել է, այդպես կլինի:

Պատեր կան, որ կուլ են տալիս. մարդը գնում, կորչում է հեռվում...

Պատեր էլ կան, որ վախենում են ունենալ սեփական հիմք, սեփական քայլվածք՝ ընկնում-մեռնում են, թողած մի կմախք, մի մեծ քարացում. ընկնողը ուզում է ելնել, մեռնողը՝ ապրել, հառաչողը՝ ծիծաղել...

Ես նայում, լսում ու տեսնում եմ այդ բոլորը և ոչինչ չեմ անում, որ ընկնողը ելնի, մեռնողը ապրի, հառաչողը ժպտա:

— Պատ,— անպորությունից ասում եմ, և ձայնս խուլ է:

Պատեր կան, որ ճաքած են: Ձեղքվածքից ջուր է կաթում մենակ մնացած լացող աչքի պես: Պատեր կան, որ հարթ են, խնամված: Պատեր կան, գաջը ճեղքերից թափվել է՝ նրանք նման են մաշված ձեռքերի: Պատեր կան, ուզում ես նրանք հավերժեն, որպես հույս, հիացմունքի մի քարացում:

Բայց ամենից շատ իմ դիմացի պատն եմ սիրում:

— Պատ, սիրելիս,— մենակ մնացած մի ժլատ կաթիլ ընկնում է իմ ձախ աչքից, հոսում իր հնացած հետքով:

Հեռվում ինչ-որ մեկը հաշվում է.

— Մեկ, երկու...

Այդ հատու արտաբերումը կպչում է ինձ, արձագանքվում:

Ժամանակը թռչում է: Խաղում են երեխաները: Ամեն նոր թվի հետ ինձնից ինչ-որ ուժեր պոկվում գնում են: Ուշ է, ու դեռ ոչինչ չեմ արել:

— Տասնմեկ:

Հեռվում քրթմնջում են, գգվում, անրջում, հրմշտում... իսկ ես նստած իմ լուսամուտի մոտ մի հեքիաթ եմ հորինել ու անլսելի պատմում եմ բոլորին.

Լինում են պատեր գեղեցիկ ու շքեղ, որոնք լավ են խնամված... և երբ մթան մեջ մեռնում է լուսնի շափյուղան՝ փողոցներից մեկում լուսավորվում է մի լուսամուտ, դիմացը ոչ շքեղ մի պատ, որի մոտ ամեն օր հանդիպում են տղան ու աղջիկը, իսկ ծեփերը ծանոթ ու հին են:

ԿԱՏՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

— Սիրելի, թափանցիկ աչքունքով կատու, փափլիկ ու էլաստիկ կատու, մուկը մեղք է:

— Ծվծվան, կրծկրծան մկնիկ, թմբլիկ ու բարակպոչ-մըկնիկ, կատուն սոված է:

— Լսի՛ր, մուկը փոքր է:

— Լսիր, կատուն էլ մեղք է:

— Դու ճիշտ ես:

— Դու էլ:

— Ախ, եթե ճիշտ եմ, մի կեր:

— Ախ, եթե ճիշտ եմ, կուտեմ:

— Լսիր, ինձ ոչ ոք չի սիրում, թակարդ են լարում իմ դեմ, ու բարեկամ չունեմ:

— Քո թփթփոցը ինձ մոռացնել է տալիս, որ դու մեղք ես, որ դու մենակ ես, որ դու անպոր ես:

— Եթե ինձ օգնես, մտածս կարասը շուռ կտանք, եկ բանակցանանք: Շատ հետաքրքիր կլինի. դեռ ոչ մի կատու, ոչ մի մկան բարեկամ չի եղել... մեր մասին կգրեն, մեկ կնկարեն յուղը ուտելիս, մեկ կնկարեն իրար սիրելիս: Հիմա կարմանալու քիչ բան կա, կարմացնենք:

— Հըմ,— այստեղ կատուն բոլորովին լրջացավ և մկանը հեռացրեց բերանից: Կատուն լրջանում էր, իսկ մուկը շարունակում էր ծկլթալ՝

— Արի մառան գնանք:

Այստեղ կատուն միամտություն ունեցավ մկանը չանչերից զգելու: Մուկը փախավ պատանցքը: Կատուն չանկռեց պատը՝

— Ծա՛, ծա՛, ծա՛...

Կատուն խոժոռվեց.

— Ու՞ր մնաց քո բարեկամությունը...

— Ես պատանցքերում եմ բարեկամություն անում, եթե քեզ թանկ է իմ մոտիկությունը, եկ:

Այստեղ կատուն կանգնեց թաթերի վրա, աչքերը սևեռեց անցքին:

— Եկ, փամփլիկ ու սիրելի կաթնակեր փիսո, փեշ սիրող, տաք սիրող փիսո, ե՛կ...

— Չեմ կարո՛ղ...

— Ծա՛, ծա՛, ծա՛... թափանցիկ աչքունքով փիսիկ, մուկ սիրող, միս սիրող փիսիկ, եկ:

Կատվին թվաց մուկը նվաղում է սիրուց:

— Ինչ անեմ,— շվոթված վեր թռավ:

— Գնա մի քիչ հաց բեր:

— Որտեղի՞ց:

— Մտիր վառարանի տակ, գտիր կերակուրդ, սերն անհաց անպոր է:

Կատուն ցատկեց վառարանի տակ՝ մյաո՛ւ...

— Ի՞նչ պատահեց, սիրելիս...

— Ջո՛ւր...— կատուն վար ու վեր էր ցատկում, մուկն էլ անցքի մեջ պատեպատ էր կպչում: Կատուն այրվում էր, մուկը մրսում: Բայց որովհետև մուկը լավ գիտեր կատվաբանությունը, արհամարհեց սերը՝

— Դե, ես գնացի:

— Ո՞ւր:

— Փշուրներ գտնելու:

— Միթե՞ ինձ թողնում ես:

— Ստիպված եմ, բայց հիշիր, ես քեզ կտեսնեմ իմ երազներում, նամակներ կգրեմ:

— Մ-ի՞-գը-նա՞...

— Կը-գը-նա՛մ...

— Ուր էլ գնաս, կգամ, ես աստղեր կիջեցնեմ քեզ համար, իմ սնուկ, բարակպոչ, իմ թմբլիկ մկնիկ, մատներդ բեր հաւբուրեմ...

Խեղճ մուկը, որ երբեք այսքան սեր չէր տեսել՝ մատները մնկնեց անցքից:

— Որպեսզի մենք մոտիկ լինենք, որպեսզի համբուրեմ պոցիկ պոչդ, և կատուն համբուրում էր մկան մատները: Մուկը ծվծվում էր, մուկը կարմացել էր սիրուց: Նա քիչ-քիչ դուրս եկավ անցքից: Նա մոռացավ իր պապերի ողջ մշակույթ մկնաբանության մասին, մոռացավ սառը անցքերի խոնավ ցկրմությունը, կորավ կատվի գրկի մեջ:

— Օհ, որքան լավ է, օհ, դու հկոր ես, դու ջնջել կարող ես մի ողջ մշակույթ, որ վոհողության գնով ստեղծել են իմ պապերը: Ահ, ես քոնն եմ հավիտյան:

Այստեղ կատուն հիշեց կատվաբանության ողջ դասընթացը.

— Վեր՛ջ, ես քեզ կուտեմ:

Այստեղ մուկը ծվծվաց՝

— Իսկ մեր սե՞րը...

Այստեղ կատուն նրան բարձրացրեց գլխից վեր.

— Ես քեզ վոհում եմ հանուն կատուների մեծ սիրո: Զոհում եմ, որ կատուները տիրակալ լինեն: Մեր ուսմունքն այդ է, պահանջում: Ինձ կանչում են կատվաբանության հերոսներ... ինձ...

— Ես երբեք չեմ հավատացել սիրո մեծ ուժին,— հպիվ ասրտաբերեց մեռնող մուկը:

— Ես էլ,— հպիվ մռմռաց սիրեցյալ կատուն:

— Ես,— մուկը ծկլթաց կատվի փորում:

— Ես,— կատուն թռավ թախտի վրա:

— Ես, ես, ես...— մռլտացին կատուները թախտի վրա:

ՏԱՐԱԿՈՒՍԱԾ ԲՈԲԻՆ

Նա աշխատանքի գնալիս սովորություն ուներ մտքի մեջ հաշվելու: Հաշվում էր քայլերը, փողոցի ծառերը, մարդկանց: Այդ զբաղմունքը հանգստացնում էր Գենին, և նա առանց ուշանալուց չարանալու՝ տեղ էր հասնում: Որովհետև բարձրաձայն չէր հաշվում, մտամոլոր մարդու տպավորություն էր թողնում:

Այսօր էլ սովորականի պես հաշվում էր մտքի մեջ, երբ ինչ-որ բան դրդեց, որ նա ետ նայի. դրդումը կենսական ուժ է:

Խնամված մի շուն նույնպես կանգնեց:

Գենը տեսնելով նրան՝ կիսաբարեհոգի ժպտաց: Նա միշտ ժպտում էր, երբ հանդիպում էր խնամած շների.

Շանը դուր եկավ Գենի բարեհոգի տեսքը:

— Հը՞, ի՞նչ կա,— մտերիմ հարցրեց և մոռացավ, որ շատ է ուշացել:

Շունը, կգալով Գենի մտերիմ տոնը, կանգնեց ետնաթաթերին:

— Կախարդվա՞ծ ես, ի՞նչ է, բարեկամ...

Հանկարծ Գենը հիշեց, որ բոլորովին ուշացել է, հիմա կատուգեն և կասեն՝ նորից Գենը... Հա՛, հա՛, նորից Գենը,— չարացավ նա,— շուն շան որդի, խոսել էլ չգիտես, բան հասկանամ,— շուռ եկավ ու գնաց:

Շունը վազեց նրա հետևից. երբ մարդու հետևից որևէ մեկը վազում է, նա բոլորովին կորցնում է հաշիվը:

— Մեկ, երկու, երեք,— չոր չոր սկսեց նա,— բայց որոլ-

հետև կգաց անխուսափելին իր հետևում է՝ շուռ եկավ ու ասաց.

— Ուրիշ բան ու գործ չունե՞ս...

Շան լեզվի կարմիր տեսքը վիրավորեց Գենին.

— Լեկուդ բունը դիր, անպիտան:

Ասաց ու անհարմար կգաց: Նա միշտ անհարմար էր կգում, երբ կոպիտ էր լինում որևէ մեկի հետ:

Շունը խեղճ ու կրակ, կտրեց Գենի ճանապարհը, կանգնեց ոտքերի մոտ:

— Հը՞, ի՞նչ կա, ինչ ես ուզում...

Ճարահատյալ, Գենը ձեռքերը գրպանները տարավ՝ նախաճաշի փաթեթն ընկավ մայթին՝

— Ա՜, դու գիտես ում հետևից ես գնում, շները միշտ իմանում են ում հետևից գնալ...

Մինչև նա խոսում էր, շունը միանգամից կուլ տվեց տապակած ուղեղը, որ դուրս էր սահել փաթեթի արանքից:

— Դու կերար իմ ողջ ունեցվածքը,— սթափվեց Գենը,— կերար, մեկ է, շուն ես, շուն էլ կմնաս,— կես կատակ, կես լուրջ նա շոյեց շան գլուխը,— համով էր չէ՞, հապա ինչպես, ես ուղեղ տապակելու վարպետ եմ, դե բերանդ յուղոտ է, մի կրակ տար... Անունդ չասացիր, Չամբա՞ր... չէ, թեև շների հետ քիչ եմ գործ ունեցել, բայց գիտեմ, ավելի կարգին անուն կունենաս... Դե լավ, բարեկամ, ուշացել եմ...

Գենը դժկամությամբ ոտքերն առաջ տարավ և մտքի մեջ շարունակեց՝

— հինգ, յոթ,. վեց...

Հանկարծ ուզեց իմանալ, թե ուղեղ կերած շունը ինչ է մտածում ընդհանրապես մարդկանց մասին.

— Էյ, սպասիր,— շուռ գալով կանչեց նա:

Շունը հեռու փախավ:

— Դե կանգնիր, բան ունեմ ասելու... Ես գիտեմ, դու տեր ունես, որովհետև ուտելուց հետո չեկար իմ հետևից: Միտքս փոխեցի, գործի չեմ գնում: Երևում է խելոք շուն ես, ասա, իմ բանը ո՞նց է լինելու:

Շունը պատրաստակամ շարժեց պոչը:

— Հեյ, Բոբի, ո՞ւր ես...— դիմացի խանութից կանչեց

ուվլլ, որ բուսնեց մայթին: Նա նույնպես փաթեթ ուներ թևի տակ, և կախվել էր երշիկի թելը:

— Բոբի, չե՞մ ասել հեռու չգնաս, շուն ես, շուն էլ կմնաս,— փնթփնթաց տերը:

Շունը ամոթից ավելի կախեց ականջները:

«Երևի ուզում ես տերդ փոխել, Բոբի, քո տերը լավ մարդ է»:

— Բոբին,— ձախողակ-ձախողակ սկսեց Գենը,— Բոբին կրևում է կրվել է երշիկից, նրան տապակած ուղեղ տվեք:

—Սա ո՞վ է, Բոբի, որ տապակած ուղեղից է խոսում... — Քանի չեմ չարացել, ասա, թող այս մարդը գնա իր ճամփեն, դու իմ շունն ես, նա այստեղ անելիք չունի:

Նա շանը մի ծանրակշիռ հարված հասցրեց, որից Բոբին սրուչն իրեն քաշած գնաց նրա կողքից:

Որովհետև անուղղակի հարվածն ուղղված էր Գենին, Գենը լավ կգաց, մնաց մայթին բոլորովին միայնակ ու բոլորովին առանց հաշվի:

«Է՞հ, բախտ է, չես խուսափի, դեռ լավ էր, որ ուղիղ չխոսեց ինձ հետ, երևում է կարգին մարդ է և եթե տապակած, կամ հում ուղեղ ունենար՝ չէր տա պատահական շների»:

Հանկարծ Գենը չսիրված, աննշան, անգործ կգաց: Նա չարությամբ լցվեց բոլոր հպարտ շների, երշիկ գնողների և փնթփնթացողների դեմ և ուզեց անպայման Բոբիի տերը մի քիչ խեղճանար, կամ գոնե ցույց տար, որ խեղճանում է:

— Էյ, Բոբի, մի գնա,— կանչեց նա գոգոռող ձայնով,— արի ինձ հետ, ես քեզ ուղեղ կտամ, կտապակեմ ու տաք-տաք կուտամ:

— Բոբի, այս մարդն ինչ է ուզում ինձնից, թող տապակած ուղեղն իրեն պահի,— չհամբերեց տերը:

— Բոբի, քո տերը տապակած ուղեղից բան չի հասկանում:

— Բոբի,— ձայնեց տերը:

— Բոբի,— աղաչեց Գենը,— թող տերդ լեզուն իրեն քաշի:

Այստեղ Բոբիի տերը պայթեց.

— Այս մարդուն ասա, որ ինքը խենթ է, Բոբի:

— Բոբի, տիրոջդ ասա լեզուն իրեն քաշի, այլապես վատ կվերջանա:

— Բոբի, այս ցնդածը խանգարում է մարդկանց:

— Բոբի, քո տերը...

Մայթի վրա մի բան էր եռում, եռում էր երկու մարդու մեջ: Շունը շշկլված հայացքը Գենից տանում էր տիրոջը, ետ բերում Գենի վրա:

— Բոբի, այս մարդը բան ու գործը թողած... նրան ասա, Բոբի, ես տանել չեմ կարող մենակ անցորդներին:

Այն, ինչ եռում էր, եռաց, վերջացավ և Գենը ասաց՝

— Բոբի, տիրոջդ ասա, էխ, Բոբի...

Գենը բոլորովին չէր մտածել կայրացնելու, հաշիվը կորցընելու և մյուս բաների մասին: Գենի կյանքում միշտ լինում են բաներ, որոնց մասին երբեք չի մտածում, իսկ ինչի մասին մտածում է, նրանք երբեք չեն լինում, երբեք:

— Բոբի, գնա տիրոջդ մոտ, թող նա իրեն տղամարդու պես պահի, ես գիտեմ, դու խեղճ տեր չես սիրում:

Գենը շանը հրեց դեպի օրինական տերը և կանգնեց մայթին այնպես, կարծես աշխարհն էլ կանգնել էր նրա հետ ու մոլորվել էր:

— Բոբի, ներիր ինձ, ես հիմարի մեկն եմ, ես վիրավորեցի քո տիրոջը, ես ձախողակ մարդ եմ, Բոբի, երբեք իմ ուզածը չի լինում, երբեք:

Շունը կանգնել էր նրանց մեջտեղը ու երկմտում էր, հետո գնաց նստեց ծառի տակ, մարդկանցից հեռու:

«Մենք պատահական շների, սերերի ու տապակած ուղեղների համար վատնում ենք մեր ողջ կյանքը,— Գենը կարկամել էր մայթին և չգիտեր ինչ աներ:

Բոբիի տերը ժպիտը ծռած բերանին՝ խաղում էր թևատակի երշիկի թելի հետ:

ՊԵՏՔ Է ՆՈՐՈԳԵԼ ԱԹՈՌԸ

Տների կողքին մի տուն կա, այդ տանը ջարդված մի աթոռ, մուտքի մոտ փայտե սանդուղք, ելքի մոտ՝ երկու ալեվարս գլուխ, որ մտածում են: Ջարդվել է սիրած աթոռը, չի խոսում, բայց նանը գիտի, որ տնքում է՝

— Շուտ ջարդվեցի, մաշվել էին ոտքերս:

Այդ նա լսում է, երբ է նստում աթոռին, և աթոռը ճռռում է:

— Գնալու է ծերանոց:

Ծիծաղեցին ծերունական ծիծաղով:

— Մենք էլ մի օր կջարդվենք, մեկ չեն նորոգի:

Տխրեցին ծերունական տխրությամբ: Երեկոն գնաց հանդարտ, մի քիչ անհույզ, մի քիչ լի, ինչպես շատ օրեր, որից ձանձրանում են:

Սենյակում էլի աթոռներ կային, մեկ էլ բոլոր այն ամենը, ինչ քիչ թե շատ պետք է մարդուն:

Լուսամուտի ապակին սառել է, երկու կտորից է, իսկ ալանքից կայծակի պես լուսավոր շերտ է վազում, երբ անցնում է մեքենա ու վառում է լույսը:

— Ամեն մեկս ինչ-որ տեղ աթոռ ենք:

Մեկը գնաց, ոնց որ ապակու արանքի լուսավոր շերտը: Մյուսը մնաց սենյակում, ոնց որ մի ջարդված աթոռ:

Ողջ գիշեր լուսաշերտը սրտատրոփ վառվում ու փախչում էր:

Գնացողն ու մնացողը նախքան քնելը շատ մտածեցին ծառերի, փայտերի, բարեկամների, շինափայտերի ու ջարդված

աթոռների մասին և նույն փայտից սարքված մուտքի, կամ ելքի սանդուղքի մասին, որը փտում է:
Առավոտյան արթնացող քաղաքի հետ Սուրեն պապն ասաց.

— Բարի լույս, Աշխեն, այսօրվա լույսը փառավոր է:

— Լույսը վրադ, ինչպե՞ս էին մերոնք:

— Էլի նույնը, մտածեցի՞ր աթոռների մասին:

— Աստիճանների մասին նույնպես:

— Ո՞վ է քեզ վրդովել,— նայելով նանի մաշված ձեռներին կարմացավ ծերուկը:

— Աթոռն ու սանդուղքը, ինչո՞ւ ես նայում ձեռքերիս:

— Վատ է, բարեկամ, թեյ լցրու, մեր ձեռքերը նման են:

— Վատն էժան բառ է, քանի՞ շաքար գցեմ:

— Մենք մի տեսակ աթոռ ենք... երեք հատ բավական է, հոգիս:

թեկնածուց հետո գնացին ամեն մեկն իր գործին՝ մտածելով կապուտների ու աթոռների մասին:

Հետո խոհն էլ լռեց. աշխարհում ինչ-որ մեկը, որ հենց նոր ծնվեց, ծնվեց, որ նորից աթոռ չինի, նա հասկացավ պառավի ու ծերուկի մտքերը:

Երեկոյան, երբ նորից հավաքվեցին սեղանի շուրջը, նրանք հիշեցին հին ու նոր մի հեքիաթ.

— Հիշու՞մ ես դողդոջուն մարդուն, թոշնած վարդը, պատանուն և աղջկան, որոնք գնում էին դեպի ծով... Նորից թեյ կլլու, մասուրով եփած քո թեյին թեյ չի հասնի:

— Խմիր, նորից չեմ ուզում լսել: Սուրեն, թեև ամեն ինչ մեկ է, բայց ուզում եմ աթոռը տանք նորոգելու:

— Այո, նորոգել պետք է, սանդուղքը հարկավոր է քարից սպրքել:

Եվ ծերուկը նստեց ջարդված աթոռի կողքին, գետնի վրա, այս անգամ աթոռը չճռռաց, չխեղդվեց աթոռային վշտից, որի փոխարեն ծերուկը հապաց:

Երկու ալեվարս գլուխ հակվեցին ծերունական խոհից: Հակվեցին աշխարհի ամեն ինչի. չարի ու բարու, ջարդված աթոռի ու հավերժական սանդուղքների համար: Եվ որովհետև ծերուկը յուրձրանալու համար հենվել էր աթոռին՝ աթոռը վերջնականապես ընկավ:

ՊԱՏԱՌ-ՊԱՏԱՌ ԵՐԿԻՆՔ

Մտմտալով փախուստի հնարավոր ձևերը, Սոնան նայեց շուրջը. շոգից ծարաված փողոցներում շունչ չկար, պաղպաղակավաճառ ծերուկը գլուխը մտցրել էր պաղպաղակի կլոր ու երկար ամանի մեջ: Թերթավաճառը թաքնվել էր կրպակի անկյունում: Ծանոթները գնացել էին ծովափ՝ սիրտ ճմսելու չափ ծանր էր արևը: Ծանր էր Սոնայի, տոթ քաղաքում մնացածների համար: Քաղաք, որի դռները բաց են, սեղանները հյուրընկալ, և Բարեկամության փողոցի վրա է ամփոփված գրողների, ֆիզիկների, ճարտարապետների տները, փոստը, գրադարաններ, մանկապարտեզ-մսուրներ, պոլիկլինիկան, ակադեմիան իր համալիրով և նշանավոր մարդկանց տներով: Բարեկամության փողոցի վրա են ամփոփած ամենագեղեցիկ առանձնատներն ու բարձր սոսիները, ամենաշքեղ ուռիներն ու ամենապռակլաց այգին, սիրահարների փողոցը, բաժանության տուպիկներն ու Կամոյի դպրոցը:

Սոնան շրջապատված այս բոլորով՝ սկզբում փախավ պաղպաղակավաճառ ծերուկից. անտանելի ջրալի աչքեր ուներ այդ ծերուկն ու թաց, խոնավ ձեռքեր: Հետո փախավ գրավաճառից, որի թմրած մատները ննջում էին գրքերի վրա:

Հովը, ծառի տակ, հյուրընկալ նայում էր Սոնային: Ծառի տերևների մեջ երկինքը պատառ-պատառ էր եղել, և Սոնան չգիտես ինչու ուրախացավ, որ մի պատառ երկինք դեռ կա, որին կարող է տիրություն անել: Նա՝ հեռու, անգլուխ ու անհեռանկար, հենվեց ծառին: Նա նման էր փողոցի համայ-



նապատկերին, որի մեջ ոչ մի խենթ բան չկար, որ Սոնային թվար, թե աշխարհը կարող է հիասթափվել:

Երբ աչքերը պարզվեցին, նա ետ շրջվեց: Հայացքը ընկավ մի շնիկի: Տղաները, արևախանձ ու չար՝ հեռվից գաղտագողի նայում էին: Շնիկը թույլ հեծկլտում էր:

Սոնան նայեց այդ փոքրիկ, սև, մեռնող արարածին և հասկացավ, որ կյանքում պատառ-պատառ երկնքից ու անտարբերությունից բացի էլի տխրություններ կան: Նա ձեռքն առաջ մեկնեց. շնիկը նեղացած թեքեց գլուխը: Թաղի փոստատարը կանգնեց՝

— Մեղք է:

— Չգիտեմ ինչ անեմ,— ասաց Սոնան:

— Երևի տղաներն են գցել:

— Տղաները չար են,— ատելության պես Սոնան նայեց մայթին:

Փոստատարը կարմացավ.

— Շուն է, հո մարդ չէ:

Սոնան նեղացած լռեց:

— Ամեն արարած պարտավոր է պահելու իր ձագին,— փիլիսոփայեց փոստատարը, որ դեսից-դենից հավաքած իմաստուն կամ սովորական մտքեր ուներ լեզվի վրա:

Ազվելով անորոշությունից, աղբակույտից, ճանճերից ու ամայի փողոցից՝ Սոնան ոտքերը քարշ տվեց:

Սոնան, որ ժամ առաջ իր տառապանքի համար մեղադրում էր աշխարհին, սկսեց դիրքերը կիջել. շատ փափուկ էր բակլաթոռը:

Տեղում շուռ-մուռ եկավ, հետո ծալեց ոտքերը, հետո իջեցրեց, հետո քրտնեց ու վեր կացավ. բնակարանն ու բակլաթոռն ինչ են, երբ աշխարհում պատառ-պատառ երկինք կա և մեռնող շան ձագի հեծկլտոց:

— Տարան,— նայելով Սոնային ասաց պաղպաղակավաճառ ծերուկը:

Սոնան ուղեղի մի անկյունում վերջին անգամ լսեց մեռնող ձագի հեծկլտոցը: Սոնան այդ ձայնն իրենից դուրս շպրտեց:

Նա քսան կոպեկանոց մեկնեց, կուլ տվեց մի պաղպաղակ և պաղպաղակի հետ կուլ տվեց մի մասն այն բաների, որոնք

նրան կոշտ ու անմարսելի էին թվում: Եվ արևը, փոստատարը, սպասպաղակի ծերուկը, պատառ-պատառ երկինքը, չար տղա-նեյր, գրավաճառը, բոլորը դարձան կով, տանելի, սովորական ու մոռիկ:

«Մարդկանց ոչինչ բան է պետք նաև մխիթարվելու և մյուսն մարդկանց հատկացված բարձրունքում տեղ գրավելու համար»:

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Ռոբոտը քայլում էր գիշերվա լռության մեջ:

Նա գիշերվա տերն էր.

Նրա ականջները դժժում էին գիշերվա խավարի մեջ: Ամեն բան իր երգն ունի: Մթամած քաղաքը նստել էր փողոցների մեջքին ու տեղից չէր շարժվում:

Փոքրիկ, սիրուն Ռոբոտ էր: Հրճվում էին, խոսում, խոսում, ցուցադրում:

— Մեկ, երկու քայլիր...— ասում էր վարիչը:

— Մեկ, երկու, կանգնիր...— սաստում էր վարիչի կինը: Այնպես էր սաստում, քիչ էր մնում Ռոբոտը դուրս գցեր պտուտակները:

Սիրուն կին էր, մեռավ, ծեր վարիչին թողեց թիկնաթոռի մեջ:

Խավարի մեջ տագնապեց մեքենայի սուլիչը. ցնցված Ռոբոտը կանգնեց.

— Համբակ...— հակառակ մարդկանց, վարորդը Ռոբոտին մարդու տեղ դրեց:

Քաղաքի մանր փողոցների լաբիրինթը հեռու էր, այլապես կթեքվեր դեպի խճճված խաչմերուկները, ուր աղմուկ չկար, և ամեն ինչ խեղդվում էր լռությամբ:

Հանկարծ քաղցր շշունջներով լցվեց լռությունը... մութը դարձավ տեսանելի, և Ռոբոտի ռունգները թշշացին. տարօրինակ բան էր կատարվում. խաչմերուկը լույս էր: Մի կին, որ նման էր հրաշքի՝ համբուրում էր մի տղամարդու: Մեքենայի շտապող լույսն անցավ ու անհետացավ: Ռոբոտի բաց աչքերը

պտտվեցին տեղում: Հրաշք կինը սիրո առաջին տեսիլքն էր: Ռոբոտը հասկացավ, որ կինը, այդ հրաշք կինը... և նա կարոտ զգաց, կարոտ այն ամենի, ինչ իրենը չէ և իրենից հեռու է: Նա արագացրեց քայլերը:

Հաջորդ խաչմերուկում մութը շշնջում էր.

— Սիրում եմ, սիրում եմ...

Դա սիրո առաջին շշուկն էր, որ լսեց Ռոբոտը, լսեց ու տարօրինակ բան կատարվեց՝ նա փակեց բաց աչքերը: Բայց լուսաբացը Ռոբոտին միշտ զգոնություն է հուշում: Քայլեց:

Ահա ինստիտուտը, մայր ինստիտուտը, Ռոբոտը հայր չունի:

Նրա մեջ հանկարծ միտք ծագեց (մինչ այդ մտքեր չէին ծագում) իր ստեղծողին, որ մի ներվային ծերուկ էր, հարց տալ (չլսված բան):

Ծերուկը քնել էր խալաթը հագին, ու ձեռքերը կախել էր թիկնաթոռից, ոնց որ սպանվածը արկածային ֆիլմում:

— Ինչու՞ են համբուրվում մարդիկ,— Ռոբոտի մետաղե ձայնը կպավ քնածի քունքերին:

— Ի՜... ի՜... իի՜ի.

— ... բուրվում մարդիկ... — արձագանքեց Ռոբոտը:

— Ի՞նչ մարդիկ....

Ռոբոտի նման շատ քիչ բան էր կարողանում ասել ու անել:

— Ի՞նչ է պատահել:

Ծեր վարիչը հետո հասկացավ, որ Ռոբոտները չեն պատասխանում այնպիսի հասարակ հարցերի, ինչպիսին է «Ի՞նչ է պատահելը»:

— Մարդիկ համբուրվում են,— ճռճռաց, խպխպաց մի ձայն:

— Հանգստացիր, հանգստացիր,— ճիգ թափեց վարիչը, բայց Ռոբոտի ձեռքերը, ոտքերը, գլուխը թրխթրխկալով գլորվեցին գետին: Էլ Ռոբոտ չկար, ոնց որ մարդը, որից հանում են հիշողությունները, հույզերը, կարոտները:

— Դու կատաղության կհասցնես մարդու,— վարիչը ոտքերով սկսեց հարվածել Ռոբոտի թափված մասերին,— վեր կաց, քեզ հատակին փռվելու համար չեն սարքել:

Վիրավորանքը պտուտակների միջով հաղորդվեց ջարդված ձեռքերին, ոտքերին, գլխին:

Շիկացան Ռոբոտի մասերը, տնքալով սկսեցին իրար գալ:

Սկզբում ամրացան ոտքերը, հետո չխկացին ձեռքերը, հետո դդղդաց գլուխը:

Ծեր վարիչը սարսափած դուրս փախավ:

Մի անգամ իրեն գապանանոց էին տարել, Շիմպանզեն նստել էր ահա իր պես, իսկ մարդիկ խմբվել էին ճաղերին, ծիծաղում էին. մարդիկ չափից շատ են տեղի-անտեղի ծիծաղում.

Նա մենակ ու անզոր զգաց այնքան, որ որոշեց Շիմպանզեին հյուր գնալ. նախահայրերը ծոռների տարօրինակությունները ներում են:

— Մեկ, երկու...

Վանդակները փախչում էին Ռոբոտի առջևից, գապանանոցի մարդիկ փախչում էին Ռոբոտից, ահա Շիմպանզեի վանդակը.

Արու շիմպանզեն էգի հետ նստել էր վանդակի խորքում և խաղ էր անում: Նա տեսավ Ռոբոտին, թողեց էգին ու մոտ եկավ: Շիմպանզեի բարևը ճաղերին մոտենալն էր: Նրանք կանգնել էին դեմ դիմաց՝ էգը մի հնչյուն արձակեց ու ցատկեց: Արուն թաթերով խփեց նրան՝ արուները թաթերով են հասկացնում իրենց զորեղությունը:

— Ինչու՞ են համբուրվում մարդիկ,— հևաց Ռոբոտը:

Շիմպանզեն ծամածռվեց: Ռոբոտը ոչինչ չհասկացավ: Նա կանգնել էր ձեռքերը կախ՝ ինչպես մարդիկ, երբ անզոր են:

Գապանանոցի մարդիկ անձայն դիտում էին, և նրանց մեջ մեծանում էր առեղծվածը՝ ո՞վ են սրանք և ինչպես է, որ իրենք զորեղ են սրանցից:

«Ինչու՞ շիմպանզեն խաղում է իր էգի հետ, ինչու՞ հրաշք կինը համբուրում էր մի տղամարդու: Այդ ինչ գաղտնիք է, որ սկիզբ ու վերջ ունի, բայց...».

Ռոբոտը մենակ էր... և տխրում էր:

Հետո շրջվեց, ծանր ոտքերը քարշ տալով հեռացավ՝ ծեր վարիչը սպասում էր և հաբեր ընդունում: Նա էլ կին ուներ, որ կանչում էր.

— Մեկ, երկու, կանգնիր...

Բայց ինչու՞ մեռավ կինը՝ վարիչին թողնելով թիկնաթոռի

մեջ, ձեռքերը կախ, ինչպես արկածային ֆիլմերում սպանված հերոսը:

Բոլորն իրենց տեղերում էին: Վարիչը ավելի էր ծերացել.

— Ինչու՞ են համբուրվում մարդիկ,— ճակատագրի պես հատ-հատ արտասանեց Ռոբոտը:

— Գրողը տանի, քո ի՞նչ գործն է, թե համբուրվում են: Համբուրվում են, որովհետև մարդ են և գիտեն սիրել, սիրտ ունեն և կարոտներ, և կարող են ասել բաներ, որ Ռոբոտներին անհասկանալի են:

Վարիչը կանգնել էր, և դողում էին կառամած ծնկները:

— Մեկ, երկու, երեք.... հիսուներեք...

— Խելագար, — մրմնջաց վարիչը,— մեր գլխին պատուհաս սարքեցինք: Սարքեցինք, որ մարդկանց նման ավելորդ հարցեր չտա, պարզվեց ամեն ինչ իզուր է. Ռոբոտն էլ է ուզում համբուրվել:

Այստեղ վարիչը նորից նախազգացում ապրեց, և նորից դողացին կառամած ծնկները. «Հիմա ինչ-որ բան կլինի, և ես չեմ իմանա ինչպես պահեմ ինձ... քաջություն է պետք դիմանալու մի Ռոբոտի, որ մարդուց ավելի հարցասեր է»:

— Ես ուզում եմ մարդ դառնալ,— հնաց Ռոբոտը:

Ռոբոտի հաղթ ստվերը ընկել էր սմքած վարիչի վրա և վերից վար դողում էր:

ՏԵՆԴ

Հասանը իջնում, կանգնում է մայթին, նարդի շխկացնողների մոտ՝ խանութի պարապ վաճառողների հետ զրուցելու: Մայթին նստածները կանգնում են, որ նստի.

— Իջել եմ, որ կանգնեմ:

Հետո սկսում է քայլերով մի քիչ գնալ մի քիչ ետ գալ՝ օդափոխվում է:

Ծերացող օրը տատանվում է գնալ-գալու մեջ: Պատի տակ նստած արևածաղիկ չրթող կանայք թե՝

— Արի, միքիչ էլ դու չրթի:

— Չեմ սիրում,— կարճ է կապում: Շրջվում է:

— Սիրտս պայթում է, որ այդքան նստում է պատշգամբում:

— Չնստի ինչ անի:

— Մեղք է, շահել է:

— Մեռելի գույն ունի:

Կինը վերևից կանչում է.

— Արի, հերիք է...

Հասանը, օրորվելով լսում է, բարձրանում իրենց մուտքով, դանդաղ է գնում: Մինչև գնում, հասնում է չորրորդ հարկ՝ քրտնում է անորոշությունից: Նորից հայտնվում է պատշգամբում. բժիշկներն են ասել՝ դուրսը եղիր, դրսի օդը լավ է:

— Պրծան, հա պրծան,— սարքվող շենքի մասին ասում է Հասանը.

— Մեծ-մեծ սենյակներ են,— արձագանքում է կինը,— երանի այնտեղ ապրողներին:

Շաբաթ, կիրակի էլ են աշխատում, որ համ շուտ պրծնեն, համ շուտ ստանան: Պատշարը հինգերորդ հարկի պատը շարելիս ներքև չի նայում:

Հասանը տեսնում և ինքն էլ դադարում է ներքև նայել: Հաշվում է օրերը.

— Փառք աստծո, այսօրն էլ անցավ, պատը բարձրանում է, դեռ ապրելու հույս կա, Հասան:

Պատշարը նայում է Հասանին ու.

— Ո՞նց ես, եղբայր,— ձեռքի նշանով հարցնում է:

Հարցը լարախաղացի պես փողոցի էս կողմից օդի միջով հասնում է Հասանին: Հասանը ուսերն է ցնցում թե՝

— Եսիմ:

Պատշարը ասում է տղամարդ եղիր, բութ մատը ցցում է օդի մեջ թե՝

— Էսպես:

Հասանը ծիծաղում է և բարեկամանում պատշարի հետ: Հասանը բոլորին էլ բարեկամանում է, որովհետև ոչ մեկի հետ շոշափելի գործ ու հաշիվ չունի, անշառ մարդ է, փողոցի անցուդարձի հարատև վկան: Նա տեսածը մեկ-մեկ անտարբերությամբ կնոջն է ասում, կինը՝ շեշտելով՝ բոլորին:

Հասանը խոսակցությունների հեղինակ է դառնում.

— Այ կնիկ, խաբարը դու է՞ս տեղ տարել:

— Այ մարդ, էլ բան ու գործ չունե՞մ...

Հասանը անտարբեր լռում, կինը հետաքրքրված շարունակում է.

— Թալա խաբար, չկա՞...

— Չէ,— կտրում է Հասանը, նրան դուր չի գալիս կնոջ ավվոցը: Նրան քիչ բան է դուր գալիս այս աշխարհում, որի ամեն ինչը օրենքներով է: Մի օր եկան թե՝

— Հասան եղբայր, բան-ման չես տեսե՞լ... ասում են դուշբաշ Ֆրեդի ղշերը տարել են, նա էլ եկել, փողոցում կռիվ է արել, թե նարդի խաղացողներն են տարել: Գրաչ են եկել, տարվողը ղշերը մատաղ է արել: Նարդի խաղացողները վիրավորվել ու հայհոյել են: Ֆրեդն էլ կատաղել ու նարդին նրանց գլխին շուռ է տվել: Գործը միլիցատուն է հասել: Հիմա հաշտեցնողները եկել են Հասանի մոտ, որ ճշմարտությունն իմանան:

— Ես ի՞նչ գիտեմ, այ մարդ, ես հո տեղեկատու բյուրո չեմ, ես հիվանդ եմ:

— Ուզում ես էլ չխաղա՞ն... ասա, պրծի, ղշերը ո՞վ է տարել:

— Ես ոչ ղուշ եմ տեսել, ոչ ղուշբաշ, ես ոչինչ չեմ տեսել, ինձ հանգիստ թողեք:

Հարցնողները փնթփնթալով իջել են չորրորդ հարկից, թե տո ես դրա, շարունակվող դժգոհությամբ:

— Տո ես ձեր,— շպրտել է Հասանը, երբ դուռը ծածկել է նրանց հետևից: Հետո խռովել է բոլորից, կնոջից, իրենից, պատշգամբից, պատշարից:

«Ղշեր, ղուշբաշ, նարդի, գրաշ, չգիտեմ էլ ինչ... ինձ ի՞նչ, թե Ֆրեդի ղշերը տարել են, և նա կատաղել է, թող չորրորդ հարկի լուսամուտից ցած նետվի, բան ու գործը թողած ղշերի հետ է խաղում:

Ամեն մեկը երեխի պես մի բանի հետ խաղում է, կարծում է դրանով կմեծանա»:

Պատշարը հարցնում է ձեռքի շարժումով.

— Ի՞նչ է պատահել:

Հասանը ձեռքն անհուսորեն թե՝

— Մի հարցնի:

Պատշարը բարեհոգի մարդ է.

— Դարդ մի արա, կանցնի:

Հասանը ջերմանում է, որ պատշարը իր հետ ընկերություն է անում:

Նա կնոջն ասում է.

— Ընդմիջմանը գնա կանչի, թող գա մեր տուն, համ հաց կուտի, համ կխոսենք:

Նրա խոսելը նստել-լռելն է: Կինը թե՝

— Այ մարդ, կարծում էս ես էլ եմ պարա՞պ...

Հասանը հասկանում է, բայց չհասկանալու պես բան է ասում քթի տակ.

— Է՛, փոխվել ես, կնիկ:

Կինը հասկանում է, բայց չհասկանալու պես բան է ասում.

— Լավ է, թող լավ մնա, մենք ով՝ նա ով:

Դժվար է կնոջ գործը՝ տան համար դուռ ու պատուհան է:

Հասանը նորից է մենակ մնում և հաշվում է շարվող քարերը: Նա ձեռքով կանչում է պատշարին՝ արի՞:

Պատշարը ասում է՝ գործ եմ անում:

Հասանը երեխու նման թե՝ էլի կանես:

Ձեռքով-ոտքով իրար հասկացնում են, համոզում են և պատշարը չի իջնում: Պատշարությունը վերջանում է: Հասանի կառուցվող աշխարհը վերջացավ: Նա մենակ է օրվա թեժ պահին: Փողոցը դատարկվել է, որովհետև արևը օտարի պես վրա է տալիս սուր-սուր շողերով.

— Էսօրն էլ անցավ:

Պատշգամբից ներքև նայելիս էլ չի վախենում, թե կընկնի: Մարդ է փնտրում, աչքեր են փնտրում, ոտքեր, դեմքեր, որոնք կբաղված չեն: Բայց մարդիկ կբաղված ու դաժան են, կբաղված են իրենցով: Իրենց շորերով, աչքերով, ճաշերով, սերերով, ֆուտբոլով, շախմատով, արվեստով: Բայց ինչքան էլ կբաղվեն՝ մարդիկ մի օր ինքնագիտակցության կգան: Հիմար բաներ ես մտածում, Հասան, մարդիկ հիմարությունից երբեք հեռու չեն գնա՝ կմոտենան, կիմանան, կքրքրեն, կհեծեծան, կձանձրանան: Մարդիկ մարդկայինից հեռու չեն գնա:

Շոգ է, մարդ չկա, ստիպված ինքն էլ է տուն մտնում: Կինը գալիս է: Հասանը չի ասում, բայց կինը իր փրկությունն է: Նորից նույն բաներից կրուցում են.

— Այ կնիկ, չկանչեցիր պատշարին:

— Է, ինչ կա:

— Պատերը շարել, գնացել է:

— Ամեն գնացողի համար դարդ չեն անի, քեզ նայիր:

«Իսկ ու՞մ համար դարդ կանեն, մնացո՞ղի»...

— Ղշերի պատմությունն ինչ եղավ:

— Ասում են ճամփեն խառնել էին, ետ են եկել:

— Վայ ես քու դուշբաշ... բա ասում էր....

— Շատ բան էր ասում, ամեն ասողի չեն հավատա, հացդ կեր:

«Ամեն ասողի չեն հավատա, լռողին հավատա՞մ...»:

Կինը գործնական է, որովհետև տան կառավարիչն է: Հասանը հասկանում է, բայց չհասկանալու պես բան է ասում.

— Կուտեմ, էլի, այ կնիկ:

Կինը հասկանում է, բայց չհասկանալու պես բան է ասում.

— Ամեն մարդ իրա գործը գիտի:

«Օրինակ ես էլ մարդ եմ, իսկ ու՞ր է իմ գործը»:

Այստեղ Հասանը կասկածում է, կիսատանում է, կտրվում է: Մութը տապկնոցի է խաղում երեխայի պես: Հասանը փաթաթվում է, փախչում այդ ձանձրալի խաղից: Հասանը ուզում է քնել, վերջապես քնել: Ինչքան ուզում է, այնքան չի քնում: Շոգը նեղում է, ներվային խանգարում է տալիս. գլուխը հո պատերով չի տալու, պատերն ի՞նչ մեղք ունեն: Պատերը բարի պատշարներն են շարել, որ մարդիկ ապրելու տեղ ունենան, որ մարդիկ չնեղվեն: Չնեղվեն, չտրտնջան...

Եվ Հասանը քնի մեջ ծանոթ պատշարին է տեսնում՝ շարած պատերը ծիծաղելով քանդում էր, քարերը փողոցի գլխովն էր տալիս:

— Չեմ ուզում, չեմ ուզում իմ շարած պատերի ներսը...

— Մեղք են, եղբայր,— քնի մեջ սրտապատառ կանչում է Հասանը:

— Ինչ պատահեց, Հասան,— հրում է վախեցած կինը:

Հասանը զարթնում է ու լռում: Լռում է ու զարթնում: Հասանը չպետք է այդպես զարթնի: Նա գիշերը որոշում է գնալ, փնտրել: Ո՞ւմ, ի՞նչ փնտրել: Գտնել պատշարին, խոսել ու պատմել... որովհետև Հասանը պատշարին առանձնացնում է իր բոլոր ծանոթներից:

Գիշերը ծուլորեն փեշերն է հավաքում մերկ փողոցներից.

— Կգամ, կխոսենք, կխոսենք, կպատմեմ:

Օրն սկսում է իր հյուրախաղը, Հասանը շորերն է փնտրում՝ քարերը հո խաղ ու պար չե՞ն... Հասանը վախենում է թափված քարերից՝ ինչպե՞ս են կարողանում այս աշխարհում քարերը լաց լինել:

Հասանը փախչում է տնից, իջնում ու գաղտագողի գնում է: Նա գիտի, որ տենդն սկսվել է, գիտի որ դուրս գալ անհնար է՝ վերջ: Վերջը տանն են անցկացնում սովորական մարդիկ: Բայց էլի փախչում է. գիտենալու համար չգիտենալ է պետք, սովորական, անսովոր՝ մեկ չէ՞ որտեղ...

— Ցնդել է,— բարձրաձայն կկարմանան մարդիկ:

Իհարկե ցնդել է, որ տեղը մնալ չի կարող անշարժ ու հավիտենական: Գնացող ամեն ինչը խոսուն է:

Գնացող մարդիկ ու մնացող քարերը հաշտված հարևաններ են:

— Հասան, ետ դարձիր, հիմարություն է....

ԿԱՆԱՉ ՇԻՎ

Սկսբում քշեց ծանոթներին, ապա բարեկամներին, հետո դադարեց գյուղում երևալուց:

Օրվա կեսը քնում էր, կեսօրին մորը կանչում, որ հաց բերի: Հացն ուտելուց հետո հին լաթերով ծածկված դիվանին անշարժ նստում էր:

... Եղբոր հետ գնում էին աղջկատես, չեմ ու չում անում ու ծիծաղում...

Բարդին խշշում էր և հրճվանքի երգ ծորում խեժի տեսքով:

Տոնականի օրը բութ է և մոռացկոտ:

...Երկու եղբորով երկու քրոջ էին սիրում: Վերարկու գնելու գնացին:

Քույրերից մեկը, որ Տոնականին էր սիրում, ասաց՝ դու առ: Մյուսը, որ Առաքելին էր սիրում, ասաց, թող Առաքելն առնի: Վերարկուն մնաց հին խանութի ցուցափեղկում, որպես նրբաճաշակության նմուշ:

Հարևան պառավները նախանձից ու անպորությունից պայթեցին՝

— Աղջի, հլա մի դրանց տես...

— Առանց հեր ոնց մեծացան լակոտները...

Բոլոր գյուղերում էլ լիքն են այսպիսի պատմություններ:

— Պսակվի:

— Չեմ ուզում:

— Ինչի՞ չես ուզում:

Որ պատմեմ, կհասկանա՞ս... գոմաղբի հոտից գլուխս պտտվում է:

Իրենց շրջանի անասնաբույժն է, հիմա դեղորայքն ու գործիքները մի կողմ դրած մեռելների ու թաղումների հետևից է գնում:

Գետնատունը հոգսից հենվել է բարդուն, որ չփլվի: Բարդին անտեղյակ-անտեղյակ երկարել հասել է ամպերին: Աթարի ամրոցը քիչ-քիչ նստել է, տակից հանել են չոր աթարները: Ոչխարների փարախն ու կովերի գոմը թոնրատան աջ ու ձախ կողմերից կպել են տանը. աթարի հոտը, խոնավությունն ու լռությունը նստել են տան գլխին ու տան մեջ:

Գիշերը մութ է և խորհրդավոր, շները չեն հաչում և աթարի դեպի պես է ապրում Տոնականի ապրելու գիշերը:

Քարուքանդ, նեղլիկ փողոցները պատած են վտանգով ու սարսափներով, գերեզմաններն էլ մոտեցել, նստել են տների գլխին:

Ամեն լուսաբաց մայրը ոչխարները կթում է, կաթը դնում ոչխարների առաջ՝

— Պանիր սարքելու սիրտ չմնաց:

Տան շինափայտը անձրևի տակ փտում է:

Գետնատան ձախ անկյունում սև ծածկոցով Առաքելի անկողինն է:

Գյուղ մտնողը այդ տան կենսագրությունը դեռ մինչև այդ տուն հասնելը գիտի: Կարտոֆիլի փոխարեն ցանած առվույտով ու անտրամադիր տնկած ծառերով:

— Ժամի քանի՞սն է...

Ժամանակը կանգ է առել նրանց տանը և նրանց համար: Հայելիները մնացել են ծածկված կարպետի հին կտորներով, ընդունիչը կորել է հապար լաթի տակ:

Տոնականը եղբոր արձանն է պատվիրել...

Քանդակագործին սկզբում ուրիշ նկար էին տվել ուրիշների միջոցով, եկան նայեցին թե՝

— Մեր ուզածը սա չի,— երիտասարդ հանգուցյալը կողքի նկարից էր ժպտում:

Քանդակագործը իր արածից մի քիչ դժգոհ, մի քիչ կատակի տալով, սկսեց նորից քանդակել: Բայց թափն անցել էր,

վճարը քիչ էր, ձեռքն առաջ չէր գնում: Մահարձան տաշելը պատմություն դարձավ Տոնականի փնթփնթոցի հետ: Տոնականը տնից գերեզմանոց գնաց:

Այդ գյուղը, որ ձմռանը մուտք ու ելք չուներ, գարնանը մի քիչ աշխուժանում էր և բարդու խշշոցն էր աշխուժանում:

Գյուղի օդը սուր է և ծառերը ցրտադիմացկուն:

Գյուղամեջը մի դիք ու նեղ ճամփա, որի եզրերին, պատերի տակ, անշարժ ծերուկներ են նստած: Աշխարհի բոլոր գյուղերում տղամարդիկ հաճույքով նստում են ու նրանց հայացքը ուղղվում է անհասկանալի հեռուներ: Պառավներն ու պառավների հարսները առավոտից գիշեր չարչարվում են, և ոչ մի տղամարդ հիացմունքի, շնորհակալության կամ խղճմտանքի խոսքի չի ասում աշխատող կանանց:

— Հեռախոս չկա՞...

— Մեր գյուղից ավելի շուտ կհասնես ուլածդ տեղը, քան հեռախոսով կկապվես որևէ տեղ:

— Բա ո՞նց եք ապրում:

— Առաջ որ հեռախոս չկար, ոնց էինք ապրում:

Ռակետային բալա էլ սարքեն, գյուղը գյուղ է մնում, տեղ-տեղ էլ դուրալի է թարմ թրիքի ու չորացած աթարի հոտը:

Հոտավետ ուրցը, շուշանն ու բանջարը, սխտորն ու թթվաշը մոռացած՝ քաղաքակիրթ աշխարհը սուրճ ու լիմոն հնարեց, որ լռեցնի մարդկային հին բնապդները, սարերի կանչն ու ձորերի թշշոցը: Գյուղացիներն էլ սկսեցին սուրճ խմել:

Բա որ ասում եմ ռակետային բալա էլ սարքեն...

Տոնականը հենց այս ապրելուց է կվվել, եղբոր անժամանակ մահն էլ մի կողմից, բթամտությունն ու դանդաղաշարժությունն էլ՝ մյուս: Հիմա էլ գերեզմանաքարերին նստած փընթփընթում է, թե քանդակագործը լավ չի տաշում բալալը:

— Այ մարդ, էս կողմից խփի:

— Որ էդ կողմից խփեմ, ցլեպ կտա:

— Դու խփի, չի տա:

— Որ տվեց, նոր քար ես առնելո՞ւ:

— Ես փողը տվել եմ, որ դու առնես:

— Ես էլ էդ փողին առել եմ ու տաշում եմ:

Երբ գերեզմանները ծածկվում են աստղերով, և ապրողները

մտնում են հաստ վերմակների տակ, Տոնականի պառավ մայրը դուրս է գալիս իր երգը գիշերվա երգի հետ լուսացնելու: Երգ, որ ողբ է, տառապանք է, ծերություն ու գանգատ:

«Աստված, ընչի հոգիս...»:

Տոնականի գործը վերջացավ: Նա լռեց ու միտք արավ՝

— Կգնամ, ինչքան հեռու, էնքան լավ:

«Ռակետային բալա էլ սարքեն, մարդն իր վշտից պոկ գալ չի կարող, անհնարին է»:

— Տոնականը գժվել, սարերն է ընկել:

— Այդպես էլ պետք է լիներ:

— Ինչո՞ւ պետք է լիներ:

— Որ մարդու հետ մի բան է կատարվում, ուրեմն մի բան էլ պտի կատարվի,— հարևան պառավը որպես եզրահանգում ձագ տված մեղրաճանճերին քշեց փեթակը և Տոնականի պատմությունը վերջացած համարեց:

Իսկ Տոնականը դիմացից հողաթաթախ ու պինդ, ժպտալով գալիս էր և ձեռքին սարերից բերած կանաչ մի ջիվ կար:

ՓՈՂՈՑԻ ՄԵՋՏԵՂՈՎ

«Ես միշտ քայլել եմ մայթերի եզրերով, որ չխանգարեմ անցող-դարձողներին: Հիմա ես չեմ նայում շուրջս, որովհետև վաղուց է, որ քայլում եմ, և վաղուց եմ նայել շուրջս: Ճիշտ այդպես էլ վաղուց է, ինչ պառկել եմ հանգստանալու, իսկ կրծքիս տակ տոթ է: Երևի շատ մութ է դրսում»:

Նա դուրս փախավ՝ հետևից շխկացնելով դուռը: Գնաց քաղաքի կարևոր մայթերով՝ առանց կարևոր բաներ մտածելու. «Ինչ հանգիստ է, կարող ես թավալվել ու անշարժանալ... մայթերը բարի են»:

Քայլեց փողոցի մեջտեղով, ուր մութ էր, և ոչ ոք չէր տեսնում: «Ինչ-որ բան եմ մոռացել,— մտածեց նա, հետո շփեց քունքերը, որ հիշի,— փողոցում շնչիր, արտաշնչիր, միևնույն է՝ չի հատնի»:

Ինչ-որ մեկը ճչաց հեռվում, կամ գիշերվա խաբկանք էր: Դիմացից ահա գալիս է մեկը, բայց ճչացողը նա չէ: Դիմացինը խուսափում է, Հուսիկն էլ է խուսափում՝ այդ պատճառով կրպչում է, և երկուսով ընկնում են:

— Ուղիղ չե՞ս կարող,— հորանջում է կանացի ձայնը:

— Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ,— հանգիստ օրորվելով հաշվում է Հուսիկը և օգնում կնոջը բարձրանալու,— վերջ, հաղթանակ:

— Ո՞ւր էիր գնում,— հարցնում է փոշին թափ տվող կինը:

— Զբոսնում էի...

— Մեր քաղաքում ցերեկն էլ չեն կբոսնում,— քմծիծաղում է:

— Երևի:

— Իսկ ինչո՞ւ էիր փողոցի մեջտեղով քայլում:

— Որոշել եմ պատերին չքսվել:

— Ես էլ:

— Ի՞նչ դու էլ...

— Ես էլ որոշել եմ չքսվել:

— Գնանք,— ծիծաղելով ասում է Հուսիկը:

— Շնորհակալ եմ, ես քեզ ճանապարհ կգցեմ:

— Ես ինքս, դու օրորվում ես քայլելիս:

— Հիմա բոլորն են օրորվում:

— Օրորվում են, որովհետև իրենց մեջ գոռացող ինչ-որ բան են քնեցնում:

— Տունս նեղ է, և կա մեկ մահճակալ:

— Քնել քչերին է հաջողվում:

— Մենք բոլորս սովորել ենք քնել:

— Հիմա էլ կես գիշեր է:

— Կհասնենք, վերմակի տակ դու կքնես, հատակին ես, իրար չենք քսվի:

— Բայց և այնպես վաղը...

— Ինչ վաղը... հա, յոթ անց կեսին:

— Արագ կարո՞ղ ես քայլել:

— Արագ քայլել իմանայի, ավտոբուս չէի նստի:

— Լսիր, կոճակդ կախ է ընկել:

— Տուր ձեռքդ:

— Ահա իմ տունը:

— Իսկ ո՞վ կա տանը:

— Ես, կամ ոչ ոք:

— Նեղ է:

— Պառկիր, ես հատակին կքնեմ:

— Կմրսես:

— Դու իմ հյուրն ես...

— Բարի գիշեր,— ասաց ջորերով պառկած կինը:

— Քնեցի՞ր...— ուրեմն քնել շատ էիր ուզում, շատ ես հոգնել, և ապրում ես մենակ:

«Կարևոր բան, պոկ եկող կոճակ, փողոցի մեջտեղով քայլող կին, ի՞նչ եմ մոռացել, հետո կհիշեմ...»:

— Գիշեր բարի,— անձայն արձագանքեց Հուսիկը:

Գիշերը անձրև եկավ և մինչև լույս փորձված գիշերապահի պես կտկտացնում էր տանիքի թիթեղը: Ծեգի հետ լողացած մայթերը փայլում էին մաքրության հրճվանքից: Կինը բացեց աչքերն ու հարցրեց հատակին կծկված Հուսիկին.

— Ով ես դու, և որտեղ եմ ես:

— Իմ անունը Հուսիկ է, իսկ սա իմ տունն է:

— Ես վաղուց եմ մոռացել իմ անունը:

— Երեկվա կարևոր դեպքը հիշու՞մ ես...

— Դու ո՞ւր էիր գնում:

— Դեռ չեմ հիշել... սեփական անուն մոռանալը տխուր գործ է:

— Աշխատանքի չե՞ս գնում:

— Ա, հիշեցի, այսօր կիրակի է և ավտոբուս նստելու կարիք չկա: Իսկ եթե կիրակի չլիներ, արդեն ուշացած կլինեի:

— Ու՞ր էիր գնում երեկ:

— Ասացի, որ ինքս էլ չեմ հիշում:

— Իսկ ինչու՞ եկա քո տուն:

Ես խնդրեցի:

— Արդեն կեսօր է:

— Մյուս օրերն աշխատանքով են անցնում, թող այսօրն էլ քնած գնա:

— Քաղցած չե՞ս...

— Խանութ չեմ գնա, ինձ լուրջ տղամարդ չհաշվես:

— Կարգին տղամարդ և կարգին կին լինելուն քիչ բան է պետք:

— Չեմ փորձել:

— Բայց և այնպես, չհիշեցիր:

— Երեկվա պատճառը երեկվա մեջ չի եղել, իսկուր եմ ճըգնում հիշել:

— Երևի տունդ նեղ է թվացել:

— Եթե այն կա, իհարկե...

— Ավելի լավ է չլինի:

— Երկուսն էլ վատ է:

— Ես էլ նույն կարծիքին եմ, բայց կորցրել եմ հիշողությունս:

— Շնորհակալ եմ, որ ինձ խնդրել ես գալ, այլապես փողոցում էի քնելու:

— Խնդրեմ, որ օրը ուզես:

Կինը գնաց՝ առանց սանրելու մազերը, Հուսիկը շրջվեց:

— «Յոթ անց կեսին աշխատանքի, բայց վատ չէր քաղաքի լույսերը, պայծառ, անմեղ արև, արևի փայլը անցորդի շուրթին, ու՞ր էի, ու՞ր էի գնում երեկ, ուր գնալը շա՞տ կարևոր է... իսկ ես այդ երբ էի հասցրել կոնծել»: Շրջվեց:

Կանգառում տոթ է, ինքը վազում է, ավտոբուսը շարժվում է, դռներին կպած մարդիկ ցեխագնդիկների պես վար են ցայտում, հասավ ու կպավ նրանց, ավտոբուսին կպչել չկարեցավ, ուշանում էր, կնճռոտեց դեմքը: Հետո քնած ականջներում տանիքի թիթեղը կտկտում, հա կտկտում էր:

Ճռռոց: Բացեց աչքերը:

Արևի շողերը գրկած՝ շեմքին կանգնած էր գիշերվա կինը.

— Եկել եմ, որ կոճակդ կարեմ:

Կինը Հուսիկին գեղեցկուհի թվաց:

— Դու քաղցած ես:

Հուսիկը առաջին անգամ լուրջ ու լրիվ նայեց կնոջը՝ տարօրինակ է..

— Տարօրինակությունները ստեղծում են մարդիկ, խոստանում եմ լավ կին լինել:

Հուսիկը վարմանքից նստեց տեղում:

— Այդ, ինչպե՞ս հանկարծ...

— Շուտով երեկո կլինի, և ընդհանրապես երեկոները քանի գնում շատանում են... որովհետև նեղ տներում ստիպված ես լույսը գիշեր-ցերեկ վառ պահել...

— Ինչ-որ չեմ հասկանում:

— Ահա իմ ճամպրուկը.. կյանքում գոնե մի օր եղիր, ինչպիսին չես եղել:

«Մի՞թե այս աշխարհի մարդիկ վերջապես մի օր կարող են լինել այն, ինչ չեն եղել երբևէ,— ի՞նչ ես հրամայում անել...»:

— Վեր կենալ, լվացվել, ուտել հաց ու պանիր:

— Ախորժակ չունեմ:

— Ես որ ուտեմ, քոնն էլ կբացվի:

— Ո՞վ ես դու:

— Քառասուն տարեկան եմ, եկել եմ, գնալ չեմ ուզում:

Երբ նրանք ուտում էին կնոջ գնած հաց ու պանիրը՝ Հուսիկն ասաց.

— Ես հիշեցի, ես դուրս էի փախել, որ փնտրեմ:

Քիչ հետո կինը կարեց Հուսիկի կոճակը:

Օրը վախճանվում էր՝ խխունջի պես կծկվելով իր մեջ:

«Տարօրինակ է՝ ամեն ինչ սկիզբ ու վերջ ունի»:

Նրանք տեսնել չէին կարող, որ ուրիշներն իրենց տեսնում են, և շատախոսում էին երեկվա, առաջին օրվա և բոլոր իզուր անցած օրերի մասին:

«Աշխարհը, կամ գլուխս պտտվում է, աշխարհը՝ ձգողական ուժից, իսկ ես՝ ցնծության: Ես անհատ եմ, իսկ աշխարհը՝ հազարներից է բաղկացած, և ինչ-որ ինձնից է կախված բոլորի բախտը: Ես էլ ծարավ չեմ, որովհետև աշխարհը լիքը ջուր է: Ես այնքան էլ շատ բաներ չեմ փոխել իմ կյանքում, բայց հիմա կքայլեմ փողոցի մեջտեղով, որովհետև մեր փողոցներով մեքենաներ չեն անցնում: Կնայեմ շուրջս, և մարդիկ կփոխվեն իմ աչքին: Առավոտյան մեկը, որ մտածում է իմ մասին, կասի.

— Բարի լույս, Հուսիկ:

Ես, որ մտածում եմ մեկի մասին, կասեմ՝

— Բա՛րև, Անթառամ:

ՓԼՎԱԾ ԱՌԱՍՏԱՂ

Խնձորները կախվել են դեպի հողը, օգոստոսը հեշտանքից մտել էր բակ: Հարսնախոս արևը պեծին էր տալիս ցանկապատի քարերին.

— Էդ լուսնոտը, էդ սատանեն...

— Հը, ի՞նչ կա:

— Գալիս է, արի: Հրեն Ցեկոյանց պատի մոտ, երևի հիվանդ է, կամաց է գալիս: Կամ հիվանդ է, կամ մտքի մեջ գիրք է գրում:

Պետրոսը «Սև սատանա»՝ քայլում էր անշշուկ, վրայի պատառոտված հագուստի ծվենները քարշ տալով՝ խղճահարություն կար նանայի մտքի մեջ:

— Քեֆդ լավ չէ, Պետրոս, այսօր ոչ երգում ես, ոչ էլ խոսում հետներս:

— Մեռավ, մեռավ:

— Ո՞վ, ինչ ես շաշ-շաշ դուրս տալիս, ո՞վ մեռավ:

— Լեյլին:

— Քո տունը չքանդվի, Պետրոս, Լեյլին ես էլ քանի՞ տարի է, որ մեռնում է.

— Ամեն օր մեռնում է, ամեն օր մի Լեյլի է մեռնում, ես էլ ամեն օր չեմ կարողանում նրան խլել մահվան ձեռքերից.

«Անբախտության ձեռքիցը ոդորմելի եմ շատ, երբեմն էլ հուսահատ: Ափսոս, հապար ափսոս, ապա վայ ինձ խելագարիս, պանդուխտ և օտարիս»:

Երգելով էր Պետրոսը միշտ պատասխանում մարդկանց

4 — Մարքնի

հարց ու փորձին: Կերկերուն, սրտալի, երգում էր ինքնամոռաց, վերջի բառերի վրա ձայնը կուլ էր գնում, կորչում էր:

— Դարդ մի արա, մեկ նայիր՝ կարմրաթուշ սիրուն...

Պետրոսը ափով հեռացրեց աչքերի մշուշը.

— Չէ՛, չէ՛, Լեյլին վառեց Պետրոսին...

— Մոռացիր նրան, Պետրոս, ինչ ես վառվում:

— Հա՛, հա՛, վառվեցի... էս շորերն ինձ վառեցին:

Աղջիկները սովոր շարժումով եկան Պետրոսի վրայից ետ տվին փաթաթած կտորը.

— Գնու՞մ ես, Պետրոս...

— Պետրոս, բա մե՞նք...

Պետրոսը գնում, ետ-ետ էր նայում:

«Զատացվեց,— մտածեց Նանան,— սխալ սկսեցինք»:

— Պետրոս, մի գնա, բան ունենք անելու, ասելու բան ունենք:

Բայց Պետրոսի գլուխը շարունակվում էր ծանրությունից ցած հակվել: Գնում, ետ էր նայում:

— Պետրոս, ինչի՞ ես ետ-ետ նայում, մի գնա, կամ մի գնա, կամ որ գնում ես՝ ետ մի նայի:

— Ի՞նչ, ինչ ասացի՞ք...

Հանկարծ Պետրոսը ետ դարձավ, գիրքը թափահարեց, սկսեց գոռալ, գոռաց անհասկանալի ու շնչահեղձ, գոռաց իր իմացած թուքերենով, հետո փոխեց հայերենի: Թե երբ փոխեց, ինչ ասաց՝ չիմացվեց: Աղջիկները միայն վերջինը հասկացան:

— Գիտե՞ք, աստված մարդու վիզը ինչո՞ւ գայլի վզի նման ուղիղ չի ստեղծել, միայն խղճահարությունից, որ մեկ-մեկ մարդը ետ նայել կարողանա...

— Հանգստացիր, Պետրոս,— խեղճացած մոտ եկան աղջիկները:

Պետրոսը սև, կեղտոտ, գիրքը դեմքին սեղմած հոնգուր-հոնգուր լաց էր լինում:

— Սրանք ինձ սպանում են, սարերն եմ փախչում՝ քաշում են փեշերս: Փեշերս թողնում եմ իրենց, հետևիցս գոռում են՝ Պետրո՛ս...

Այս անգամ երգելով չպատասխանեց, խեղդվելով պատասխանեց:

— Արի, արի գնանք...

Գյուղում տղամարդ չէր մնացել, խոտհունձն սկսվել էր, և հարսնացու աղջիկները կարմիր նարոտը փաթաթած գլուխներին՝ կանգնում Լին բակերում ու կարոտում ջահել հնձվորներին:

Պետրոսը գյուղում մնացածների հիմնական խորհրդատուն էր, տղամարդն էր, գիժն էր, երգիչն էր, սատանան էր, երեխան էր:

Ցեկոյանց պատերին հաջորդում էր Կոչանանց կալերը: Կոչանանց կալերից ձգվում էր Բեկչոնց աթարի դեկերը: Իսկ աթարի դեկերից այն կողմ, ուր կավից ճաքճքված փոքրիկ բները բվվում էին՝ մեկը Պետրոսի տունն էր: Հին գոմի դուռ էր, կեռբերան փականով: Դռան ճեղքերը փալասներ էր մըտցըրած, որ ցուրտը ներս չմտնի, դուռը միշտ ճռռալով էր բացվում: Երևում էր մի սև ճրագավառ՝ պապի-պապի թվեց: Հետո՝ ծղոտ, հնձած գարու կոթունները: Հետո մի սեղանանման բան, հետո մի աթոռանման բան: Հետո հապար կտոր իրար կպցրած վերմականման բան: Հետո ծխից սևացած, հալված, մոմերից հաստացած կաղերով սեփական շինության բուխարիկ, խոհանոցային կավե ամաններ, խաչեր, սրբապատկերներ: Ամենակարմանալին Պետրոսը հետո էր ցույց տվել:

Այնտեղ, ուր գարու ծղոտների չորսբոլոր շարված էին քարեր, որ ննջարանը առանձնանա հյուրասրահից, ինքն իրենով տարված մի մեծ քար կասկածելի տեսք ուներ:

Այդ քարը Պետրոսի ստորերկրյա գանձարանի դուռն էր: Այդ քարը գլխի տակ էր պահում: Ավելի շուտ քնելիս գլուխը դնում էր քարին. Քարի տակ «սուս, ննջեցյալներ կաս, իմ երեխեքն են»: Նկարապարդ գրքերը պահվում էին գետնի մեջ, որի պատերը Պետրոսն իր ձեռքով ցեմենտապատել էր: Գրքերը սառը ցեմենտի մեջ ապահով ննջեցյալներ էին: Նրանց մանրապարդ գրերը մումիաների պես անշարժ գոյատևում էին: Պետրոսն ամեն օր ցգուշավոր թերթում էր բոլոր գրքերը: Մարդիկ հաց էին տալիս, երբ հիշում էին՝ Պետրոսը փառավորվում էր: Երբ չէին հիշում, չէին տալիս՝ Պետրոսը կծկվում էր ծղոտների վրա, աչքերը երկինք հառում: Հայացքը դեմ էր ընկնում

առաստաղի տախտակների արանքից դուրս պրծած եղեգներին:

— Պետրոս, դե արի, գործ կա, կովը ուռել է:

Պետրոսն էլի չեմուչում արեց, էլի ուզեց դուրս պրծնել փախչել, բայց հիասթափվեց իր դիմադրելուց ու աղջիկների համառությունից, և թողեց իրեն առաջ տանեն: Փրկելու կով չկար, Պետրոսը լավ գիտեր, որ կովերը վաղուց սար էին գնացել:

Աղջիկները նրա թևերի տակ մտած, առաջ տարան: Տարան բակ, հետո չարչարելով մտցրին գոմը:

— Այ, էստեղ,— ասաց Մանեն:

— Համ էլ հով է,— լրացրեց Նանան:

Հետո Մանեն բռնեց Պետրոսի ձեռքերը, Նանան սկսեց նրա շորերը հանել: Պետրոսը խեղճ ու կրակ կանգնել էր ու չէր հասկանում իր հետ ինչ են անելու: Երբ հերթը հասավ ներքնաշորերին՝ Պետրոսը ձեռքերը թափով ազատեց և գըռմըռալով բռնեց ներքնաշորերի կոճակները:

— Թող, դե թող,— հոխորտաց Մանեն:

Նանան ընկավ նրա վրա սկսեց չարչարել: Հևում էին: Պետրոսը մերկ ու սև, ուսերին գանգուր մազեր, գեղեցիկ ու կեղտոտ նստել էր գյուղական հին թեշտի մեջ ու չէր ամաչում իր մերկությունից: Մանեն ցախավելով չփչփացնում էր Պետրոսի մարմինը ու քրքջում՝

— Որ գիրք էի կարդում, մայրիկն ասում էր՝ քիչ կարդա, Պետրոսի օրն ես ընկնելու...

Չէր հասկացվում Մանեն մոր կո՞ղմն էր, գրքերի՞, թե՞ Պետրոսի:

Նանան տաք ջուրը Պետրոսի ցանցառ մազերին լցնելիս ասում էր՝

— Ասում էի սովորել չեմ ուզում, մայրիկն ասում էր Պետրոսի հետ կպսակեմ:

Չէր հասկացվում Նանան մոր սպառնալիքների դեմ էր բողոքու՞մ, թե՞ համակրում էր Պետրոսին:

Պետրոսը հաճույքից գռմռում էր, ձեռքերով չփչփացնում կեղտաջրի մեջ: Կեղտերը սև ջրաշերտի հետ մարմնի վրայով հոսում էին դեպի ներքև, մարմինը մնում էր մաքուր ու սուրբ:

— Օխ, աշխարհը հաստատ պտտվում է,— ձեռքերով սրբեց երեսի ջուրը, և թողեց աղջիկներն իրեն սրբեն:

Աղջիկները, գոլորշուց կարմրած, իրենց հայրերի հին ներքնաշորերը հագցրին Պետրոսին ու կեղտից սևացած Պետրոսի ներքնաշորերը Պետրոսի աչքի առաջ աղբանոց գցեցին:

Աղջիկները իրենցից գոհ և ուրախ Պետրոսի թևի տակ հաց դրին, խնձոր դրին, լոռ դրին, սոխ դրին ու ճամփու դրին:

— Դե գնա, գնա ու մեկ օրինի, Պետրոս:

Պետրոսը հարբածի նման օրորվելով գնաց Ցեկոյանց պատերի մոտով, Կոչանանց կալերի մոտով, Բեկչոնց պատերի աթարին քսվելով՝ հասավ իր տունը, բացեց ճռճռան դուռը, թևատակի ուտելիքները դրեց ծղոտների վրա, նախշուն կտորե սուփրա փռեց, հետո «գանձարանի» դռան մոտ ծնկի եկավ, նստեց սուփրի եզրին... աչքերը բներում պտտվում էին՝ սոխն ու կանաչին անհետանում էր, պանիրը լավաշին էր ձուլվում, խնձորները պոչերի հետ կուլ էին գնում: Կերավ, վերջացրեց, օխա՛յ, արեց, կավե հին ամանով ջուր խմեց, բութ-բութ նայեց իր տան պատերին. ճաքճքված կավի կտորները մեղք-մեղք կախվել էին ծղոտներից:

Պետրոսը հըմ արեց, տեղից վեր կացավ, բացեց «գանձարանի» դուռը «երեխեքին» մեկ-մեկ հանեց, փոշին թափ տվեց, մաշված էշերն իրար վրա դրեց:

— Սուս, դե սուս,— գրքի գլխին տվեց, գրքերը բերանները բաց աղերսում էին՝

— Կարծում եք հեշտ է՞ր...

Մնացյալ բառերը մրթմրթոց էին դառնում, կորչում կուշտ բերանի մեջ:

— Զահրումարը ձեվ...,— Այս անգամ հաստատ... չէր երգում: Նա շորերը վրան առավ, գլուխը դրեց «գանձարանին» ու ականջները խռով փակեց, որ «երեխեքի» լացը չլսի: «Օրս սև արած պահեցի, գիշերները անքուն, ցերեկներն առանց հաց ու ջուր, խելքս ու սիրտս ձեվ տվի... դե հիմա գնացեք, որտեղ ձերը կասեք, այնտեղ էլ՝ իմը»:

Հաջորդ օրը Պետրոսը չերևաց գյուղամիջում: Եվ օրն անցավ առանց լացի, անգիրք ու անդարդ: Հետո մարդիկ հի-

շեցին, որ հաց տվող չի եղել, խոտհունձն էլ մի կողմից: Մանեն ու Նանան գնացին կավե տների մոտ՝

— Պետրո՜ս, այ Պետրո՜ս...

Արձագանք չեղավ:

Երբ դուռը ետ գնաց, գրքերը բերանները բաց կախվել էին պատերից: Պետրոսը մատներն ականջների մեջ՝ անշարժ առաստաղին էր նայում:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԵՐԸ

Նարդու կառերը չխչխկում են և բթացնում շատ բան՝ լսողություն, տեսողություն, միտք:

Նարդու կառերը չխչխկում են և արթնացնում շատ բան՝ շտապողականություն, խաբելու ծարավ, հաղթելու կիրք:

Խաղում են կանայք, խաղում են տղամարդիկ, երեխաները: Բայց ինչպես միշտ՝ շատը տղամարդիկ: Տղամարդը շատ է խաղալ սիրում:

Կինն էլ է խաղալ սիրում, բայց անլորությունից ավելի շատ խոսել է սիրում: Այդ պատճառով տղամարդը խաղում է, իսկ կինը խոսում:

Տղամարդը բթանում, սրանում է, կինը կրուցում, թմրում: Ահա թե ինչու շատ հաճախ տղամարդը կարողանում է մեծ լինել իրենից, իսկ կինը՝ ոչ:

ՄԱՌԱՆ

Տատի գյուղը Մառայի ամառանոցն է:

— Քանի՞ տարեկան ես:

— Ես տարիք չունեմ:

Հարց ու պատասխանի չորությունից մեքենան ցնցվեց, հանգավ: Վարորդն իջավ, բացեց մոտորը:

«Տատիս աչքը լուս»:

— Լույսը վառիր,— կանչեց: Ձայնը խուլ էր,— սատանա, թյու...

— Վա՛յ...

— Ձա՛ն...

Վարորդի երկար քիթը ստվեր գցեց մոտորի վրա:

— Թյու, ժամանակ գտավ, ի՞նչ անենք...

Աղջիկը կանգնեց կեսգիշերի ու փողոցի մեջտեղը և ձեռքը տնկեց: Մի հսկա լույս եկավ, շլացրեց, լույսի միջից մի սև մարդ ասաց՝

— Ի՞նչ ես ուզում:

— Բենզին,— կմկմաց աղջիկը:

— Սատանա,— վարորդները կայրանալիս՝ միմյանց նըման են:

— Եթե չեք ուզում՝ մի տվեք:

— Կանգնելս եմ ափսոսում:

— Մի ափսոսա,— կոտրատվեց Մառան:

Բեռնատարի վարորդը սովոր հայացքով ոտից գլուխ չափեց նրան:

— Լավ...

Բայց Մառան.

— Ի՞նչն է լավ:

— Լավ աղջիկ ես:

— Շնորհակալություն:

— Դույլը բեր,— Մառային թվաց բեռնատարի վարորդը բոցկլտաց ձեռքին բռնած լուցկու բոցից:

— Կնստեմ,— Մառան ինքն էլ չհասկացավ ինչու ասաց:

Մյուս վարորդը դանդաղորեն հանեց դույլը և գնաց բենզին քաշելու: Նա բաքի մոտ կանգնեց մի պահ, ուզեց թքել, հայհոյել ու... բենզին չվերցնել, որովհետև նրան որոշ բաներ թվալու տարիքն անցել էր: Բայց տեսավ, որ Մառան նայում է վարորդին և ագահությամբ ծծեց շլանգը:

— Չխեղդվես,— չարախնդաց բեռնատարի վարորդը:

— Թյու, սատանա:

— Ոչինչ, չես մրսի,— բեռնատարի վարորդը ասաց ու աչքով արեց, ինքն էլ չհասկացավ ինչո՞ւ, ու՞մ... բայց զգաց, որ մթությունից, ճանապարհի ոլորապտույտից ու բենզինի հոտից մի թմրած բնապդ է արթնանում սրտի մեջ:

ՄՈՒՐՈՆ

Մուրոն տասը տարուց ավելի նույն բեռնատարի վրա մաշում էր նույն ոլորապտույտը, և պատահական, հինգ դոպեա-

նոց սերերը ոլորապտույտով գալիս, գնում էին վարդարելով նրա կյանքի մայթերը: Վարորդական մեծ ու պստիկ սերերից Մուրոյի մեջ ոչինչ չէր մնացել: Ամուսնացել էր՝ նախնիների շառավիղը թարմացնելու համար, բայց չէր թարմացրել, անպավակ էր մնացել:

... Մուրոն Մառային նայում էր ագահությամբ, խղճահարությամբ, կարոտով: Մառան ջահել, համակրելի... Մառան չէր ուզում նայել, բայց նայում էր: Մառան տասնյոթ տարեկան էր և տասնյոթ անգամ տղամարդու աչքերի նայած չկար, իսկ հիմա ուզեց մոտենալ, վարորդի աչքերին նայել ու աչքերի ոլորապտույտով գնալ... ինքն էլ չգիտեր ուր, ինչու՞...

Ուզում էր մոտենալ, սիրտը բռնել ձեռքում, մի տաք բան ասել, մյուս վարորդը ի՞նչ կասի, չարությունից քանիերորդ անգամ բենզին կուլ տվեց:

Զարմանալի է, գիշեր է, կեռման, խուլ սարեր, մի աղջիկ... լույսի ցանցում թպրտում է...

Մյուս վարորդը թե՝

— Բաքում էլ բան չկա:

— Կա-չկա, քաշիր:

Մառան ուզում էր մութը չլուսանար: Մյուս վարորդը հա բենզին քաշեր: Մառան հասունանում էր:

— Մառա, Մառա,— հանդիմանեց բենզին կուլ տված ծանոթ վարորդը:

Մառայի մեջ բնական արթնանում էր, փոփոխվում էր: Նա ուզում էր շրջվել և խուլ սարերին նայելով ծիծաղել, բայց այնպես որ չտեսնեն, այնպես, որ չծաղրեն, այնպես որ... անամոթություն է...

«Աղջկաս լավ տեղ հասցրու, Վաղո ջան, թող հանգստանա, պարապի»:

«Ո՞վ է պարապելու, սա՞, ապատ է, ինչ կուզի կանի...»: Մառան ոչինչ չի ուզում, ուզում է Մուրոյի աչքերը... թրթռում է, կարոտում է, ուզում է բան ասի, չի լինում:

— Աստված իմ:

Վաղոն բենզինի դույլը տեղավորեց թափքում: Մուրոն հարցականներ շարեց իր աչքերից մինչև Մառայի աչքերը:

— Ես հասցե չունեմ,— ասաց Մառան՝ կտրելով հարցականի շղթան:

— Իմ անունը Մուրո է:

— Ցտեսություն, Մուրո:

«Սարեր, լույս սարեր, փողոց, մութ փողոց... բարի ճանապարհ, Մուրո»:

Մառան կորցրել էր իր սեփական գլուխը և գտել էր Մուրոյի աչքերը:

«Թեթևսոլիկ»:

Բեռնատար Մուրոն շարժվեց: Մառան անշարժ էր: Նրա մեջ Մուրոն, Վաղոն, ներկան, անցյալը, հայրը, տատը, տատի էշը... արյունը...

— Ի՞նչ...

Մեքենան գործի ընկավ: Մառան ցնցվեց, և ապրած մի կյանք ցնցվեց նրա մեջ, սրտապատառ դուրս փախավ նրա միջից:

— Չեմ էլ ասում արի,— Վաղոն դժգոհությունը չէր թաքցնում:

— Զբաղված ես:

— Մոռացե՞լ ես... տատիդ, տատիդ էշը... Նստիր,— հանկարծ չոր կտրեց Վաղոն ու ողջ ճանապարհին բերանը փակ էր: Ծխախոտի ծուխը գալարվում էր քթի մեջ:

— Հեյ, սերունդ...

Մառան ուրախ էր, որ Վաղոն չի խոսում. վարորդները աղջիկների հետ հալվադեպ են լռում: Մառան երակներ է տեսնում, երակները և գալիքը գունեղ էր թվում. երևակայությունը անպուսպ ձի է:

Բեռնատարի վարորդ Մուրոն նստած էր դիմացի բեռնատարի խցիկում և աշխույժ սուլում էր, նա սեր էր սուլում: Երբ մեքենան ցնցվում էր, Մառայի երակի պատկերները տեղից ընկնում էին, և Մուրոն կախվում էր օդի մեջ: Աղջկա հայացքը դառնում էր դեպի ձախ՝ Վաղոն Մուրո չէ և ծուռ քիթ ունի:

Վաղոն ծխում, հա ծխում էր, կարծես կուլ էր տալիս Մառային:

«Ինչու՞ կանգնեց անիծյալը, հանգիստ գնում էինք»: Նա մտքում ափսոսում էր աղջկան...

«Էհ, շուտով կհասնենք, և վերջ...»:

Սև վիշապի պես ոլորապտույտը կուլ տվեց Մուրոյին՝ թափքի լույսը մի պահ պահելով կոկորդում:

ԼՅՈՒՍԻՆ

Նարդու վառերը չխչխկում են և բթացնում շատ բան՝ լսողություն, տեսողություն, միտք: Նարդու վառերը չխչխկում են և արթնացնում շատ բան՝ շտապողականություն, խաբելու ծարավ, հաղթելու կիրք: Խաղում են կանայք, խաղում են տղամարդիկ, երեխաները: Բայց ինչպես միշտ՝ շատը տղամարդիկ: Տղամարդը շատ է խաղալ սիրում: Կինն էլ է խաղալ սիրում, բայց տխրությունից ավելի շատ խոսել է սիրում:

Այս պատճառով տղամարդը խաղում է, իսկ կինը խոսում: Տղամարդը բթանում, սրանում է, կինը կրուցում՝ թմրում: Ահա թե ինչու՝ տղամարդը շատ հաճախ կարողանում է մեծ լինել իրենից, իսկ կինը՝ ոչ:

— Բեր, բե՛ր:

— Հերիք է, գլուխներս գնաց, առավոտից մինչ գիշեր չխչխկացնում եք:

— Լյուսի, բա ինչո՞վ զբաղվեմ:

Եվ համբերատար Լյուսին ճաքճքած նարդին բերեց: Նրանք գնացին դիմացի այգին, ուր նարդի խաղացողները շատ էին, և բթությունն էր շատ: Լյուսին նստեց գետնին և սկսեց իր խաղը... ավազի հետ. նա սիրում էր մանկության այդ մտածկոտ խաղը:

Երեխա չուներ... ահա քանի տարի է Մուրոյի հետ էր, և Լյուսին որովհետև երեխա ու հոգս չուներ՝ երեխա էր մնացել:

Բակը նայում էր այգուն, այգին՝ բանուկ ճամփին: Ճամփեն...

— Բարև, Մուրո:

— Բարև,— բնազդով ասաց Մուրոն,— և չգիտես ինչու անհարմար զգալով նայեց կնոջը:

Լյուսին ձանձրույթից ավազը վերցնում էր բռներով և մատների արանքով քամում, աննկատ փոշին նստում էր թարթիչներին՝ խանգարելով տեսողությունը:

Նարդու չխկոցը լռեց: Արթնացան Մուրոյի բթացած լսողությունը, տեսողությունն ու միտքը: Լյուսին որսաց Մուրոյի

արթնացած հայացքն աղջկան: Մառան որսաց Լյուսիի վախեցած հայացքը Մուրոյին.

«Կյանքի բեռնատարը շրջվեց, խլացավ»: Լյուսին շարունակեց ավապ համրել. անեզրական թախիծ կար ավապի մեջ:

«Աշխարհում ամեն ինչ լինում է»:

Անեզրական թախիծ կար Մառայի հայացքի մեջ՝

— Եկա...

Անեզրական դադար կար Մուրոյի մեջ, իսկ ավապը, թախծոտ ավապը դլթղլթում էր ոտքերի տակ:

Լյուսին կանգնել էր իր սարքած ավապե բլրակի մոտ և ավապ էր դարձել, համբերատար, խոնարհ Լյուսին: Մուրոն կանգնել էր նրա մոտ և մրմնջում էր.

Լյուսի, սիրելիս... Լյուսի, Մառան գնաց:

Այդ պահին նա վարորդ ու նարդիստ չէր, սեր ծախող ու սեր վաճառող չէր:

Մուրոն հիմա մեծ էր իրենից, բոլոր պայմանականություններից ու նորմաներից:

Մառան գնում էր կյանքի բեռնատարի ճանապարհներով և հատում էր ճանապարհները:

ՁԻՈՒ ԱՂԲ

Ձյուն էր եկել, իսկ սունկ աճեցնելու համար հարկավոր էր ձիու աղբ: Հիպոդրոմը հեռու էր և գործը գլուխ չեկող. վերջին րոպեին թողնված գործը այդպես է լինում: Նույնը պատահեց սունկ աճեցնելու նրանց սեփական մտահղացման նախօրեին:

Տղամարդը սևահող էր բերել և տեղավորել նկուղի փայտե հարթության վրա: Սև գույնը կարգին նշանակություն ուներ նրա աչքին. սև մարդը կրքոտ է, սև հովվաը ճարպիկ, սև հողը բերրի, սև գույնը լի ուժով: (Մարդ երբեմն իրեն-իրեն կարմանալի հետևությունների կարիք է ունենում: Դա կարծես թե լուսավորում և հեշտացնում է կյանքը: Դա շատ բան կգալու, և միայն քչի տեր լինելու հակասությունից է: Եվ նրանից, որ կյանքում չհասած բաների համար ուղեղը, սարդու ուղեղը մշտապես տենդում է) :

Նրանք, այր ու կին, համարձակվում էին երազել, որ մի օր այնքան շատ սունկ են աճեցնելու, որ հարևան կոմիսիոն խանութը գնելու է իրենցից և իրենք կարգին հարստանալու են: Հին ու բաղձալի երազ, որ ամեն մարդու ապրելու գաղտնի ու բացահայտ իմաստն է:

Եվ այսպես, շաբաթ երեկոյան այր ու կին վերցնելով պարկերը, մեքենա գտան և պատվիրեցին կենդանաբանական այգի:

Կինը չեր ուզում գնալ, բայց ցանկությունը տեղի տվեց փողի աղոտ հեռանկարներին և բնապդական լուռ օրենքներով տղամարդու հետ տեղ չգնալու հասկացությունը մերժվեց:



Նա խոսում էր ձանձրացած կամ կտրուկ: Եթե բանը իրեն մնար, ընդհանրապես չէր խոսի: Նրան թվում էր, թե խոսելը ամենաանիմն բանն է աշխարհում:

Եվ չուներ դեմքի երջանիկ, փափուկ արտահայտությունը, անուղղելի դժբախտ մարդու դեմք ուներ: Հապիվ նրա շրջապատում, ինչպես հապար մարդու շրջապատում, գտնվեր այնպիսի նշանակալից, յուրատեսակ, չմոռացվող ու... տարօրինակ դեմք:

Այգու մուտքը ամայի էր և ձյունապատ, երևում էր միայն սպասարկող անձնակազմի հետքերի ներս ու դուրսը: Սֆինքս առյուծները նստել էին անտարբեր ու քար: Նրանք մեծ էին ու պինդ, նրանք ժամանակն էին:

Այգու երբեմնի հրաշալիքների կողքով քայլելով այր ու կին մտածում էին անցյալ ժպիտների մասին, որի մեջ մտնում էր նաև կապիկը: Իսկ պինգվինի արձանը... այո, մարդիկ երախտապարտ արարածներ են, պինգվինին արձան են կանգնեցնում: Արձանը կքել էր ձյան շերտի տակ, և թվում էր պինգվինը ձմեռը շալակած տանում է:

Այգու բնակիչներին ձմեռանոց էին տարել, և այգին ընկել էր իր երբեմնի արժեքից, ինքնարժեքից և արտաքին հարդարանքից:

(Այդպես է, ձմեռ ժամանակ, և բոլոր ձմեռների ժամանակ մարդ արտաքին և ներքին հարդարանքից կրկվում է):

Քայլում էին լուռ, և նրանց ոտքերի տակ ձյունը տառապում էր, այդ կնոջն էր թվում, որովհետև բոլոր տրորվող բաների նկատմամբ ցավ էր զգում:

Հավատն էլ սովորական զգացում է, ինչպես ճաշակելիքը, հաց ուտելը, կինո գնալը: Հավատը չի կարելի անջատել մարդուց և տանել դնել ինչ-որ բարձունքի վրա: Այն քայլում է մարդու հետ, և նա էլ կարող է սայթաքել ճանապարհին:

Քնարական, գլուխը նպելի ու վեհ կանգնած էր իշայծյամը ձմռան մեջ, և կինը հիացմունքի նման մի բան զգաց նրա նկատմամբ: Տղամարդը նայեց կնոջ լուսավորված դեմքին ու... ցանկացավ աշխարհի բոլոր գեղեցիկ կանայք իրենը լինեն՝ պիրկ ու նպելի:

— Էդ ու՞ր,— հարցրեց դիմացից եկող այգու պահակը:

— Չիու աղբի:

— Գնացեք, վերևն են,— չկարմացող ու հասկացող էր այգու այդ պահակը:

«Ահա մեկը, որ հասկացավ չխոսելու, շատ չխոսելու, անհիմն չխոսելու հարմարավետությունը,— մտածեց կինը և հարգեց պահակին»:

Մեկ ուրիշը կքններ, կկասկածեր, կարևորության զգացումով խոսքի կբռնվեր, կոլորեր բեղերը և կկամենար բացահայտել իր չունեցած շնորհները:

Նրանք մտքերի մեջ շնորհակալությամբ նայեցին պահակին և քայլեցին վերև: Ծառերը ապատ էին... ոչ կարոտներ ունեին, ոչ վախ, կյանքի նկատմամբ պահանջկոտ չէին և անհրաժեշտը բնականաբար տալիս էին բնությանը:

Այգու վերևը ցանկապատ չկար:

— Մի ժամանակ մենք այստեղ ձիեր էինք քշում, երևի հենց այս ձիերից, անասպանդակ ու թեավոր:

Հիվանդ, վիրավոր ու քնձռոտ ձիերը կանգնել էին քարքարոտ փոսի մեջ և ծամում էին գարու ծղոտները:

—Ինչու են այս ցրտին թողել այստեղ,— ինքն իրեն չհասկացավ կինը:

Այրը լսեց, որովհետև նույնն էլ ինքն էր մտածում.

— Որ սատկեն,— չարակամությունը շատ էր մերկ:

Ձիերը հենվել էին իրար, նրանք համախմբվել էին, որ մինչև, ինչ-որ որոշակի պահ, կգան միմյանց մարմնի կենդանի ջերմությունը, անկրկնելի մի բան, որ բոլոր արարածներին որպես բնության շնորհ, տրվում է մի անգամ:

Այր ու կին նայեցին ձիերին և ... շրջեցին հայացքները, նրանք չուզեցին տեսնել միմյանց: Այդ պահը մերկ էր, խղճալի ու անամոթ: Նրանք ատեցին ու արգահատեցին ձիերին, այդ իրենք իրենց սատկող ձիերին... որոնք կաղ էին, անխելք, անթռիչք, բթացած ու խեղանդամ, որոնց աչքերի մեջ ոչ սարերի կարոտ կար, որ էլ ապրելու կիրք. միայն սարսափ կար: Անմարմին, դողացող, արյունոտ, ցուրտ սարսափ:

Այգուց դուրս անտառը ձգվում էր լերկ քարերի վրայով: Դիմացի լեռը անհրապույր էր ու սառը: Ձմեռը իր ահավոր կնճիռներն էր դրել ցանկապատի վրա, որոնց հենված քարացել էին ուղտերը՝ նրանք նման էին ծռմռված ճակատագրի:

Տղամարդը վախով, իրենից հեռացնելու շարժումներ անելով հավաքում էր աղբը, իսկ հիվանդ, նույնպես ահավոր վախեցած ձիերը հեռու էին կանգնել և սատկողի աչքերով նայում էին, թե ինչ է անում այդ բոլորովին առողջ ու պինդ մարդը:

— Լցվեց կարծես, բավական է:

Կինը չլսեց նրան, նա նայում էր տղամարդու ձեռքերին, որոնք կոպիտ էին, որոնք վախենում էին ձիերից: Նա այլևս չէր նայում այդ քարքարոտ, աղտոտ, սառույցով ու ծղոտով լցված փոսի մեջ հիվանդ, անտրամալ ու կաղ ձիերին, որոնք դանդաղ, իրենք իրենց սատկում էին:

— Հը, քարացա՞ր... բռնիր:

Կնոջ համար ահավոր, անչափ ահավոր ու ընդհանրապես ահավոր թվաց իրեն դիմելու այդ ձևը և նա ուզեց ինչ-որ բան հրել, գցել այդ մեռնող ու քոսոտ ձիերի ոտքերի տակ: Ապատվել, վերջապես ապատվել այդ ինչ-որ բանից, որ ուղտի ծրոմբռված կերպարանքի պես կանգնել էր իր ճանապարհին, որ խմել էր իր ավագոտ ափերի ողջ ջուրն ու իմացությունը,...

Երկուսի ձեռքերն էլ կեղտոտ էին ու սառը: Երկուսն էլ ամայի զգացումներով հրաժեշտ տալով ձիերին՝ հեռացան՝ միայն հեռու լինեն այդ փոսից:

Նրանք, մեռնելու դատապարտված ձիերը հենվել էին միմյանց և որոճում էին իրենց սարսափն ու վախը, անզորությունն ու ցուրտը, գարու ծղոտներն ու լեռնեղի կարոտը:

Քայլեցին դեպի այգու խորքը, դեպի մուտքի դուռը:

Գլխիվայր ճանապարհը սառցապատ էր, անզգույշ քայլելուց կարող էին սահել: Տղամարդը գնում էր առջևից. կինը հանկարծ հիշեց աշխարհի բոլոր գյուղերը, իրենց գյուղը, ուր տղամարդիկ քայլում էին կանանց հետ, բայց միշտ մի քայլ, կամ մի քանի քայլ ետ թողնելով նրանց. այդ պատկերն էլ նման էր ծռմռված ճակատագրի, կամ քարացած մի ճշմարտության, որը ոչ ոք չէր տեղաշարժում: Տղամարդու կախ ընկած ուսերը բարձրացել էին, որովհետև ձեռքով գրկած պարկը նա բռնել էր ուսին:

Կինը հենվեց ցանկապատին.

— Հը, ինչու՞ չես գալիս...

Նա ահավոր խղճահարությամբ ու կսկծանքով գրկեց այդ իր բաժին ձիու աղբը և քայլեց դեպի այգու մուտքը: Որովհետև նրա երկարաճիտ կոշիկները շատ էին բարձրակրունկ, նա վախենում էր սահելուց:

Որոշակի ճամփաներով ավտոբուսները, տաքսիները, ծրխնելույսները, ամեն ինչ խառնաշփոթ մեկնում էին:

— Ահա մեր տունը,— ասաց ամուսինը: Դա այն պահն էր, երբ նա իրենց տան շեմին նորեն հանդիպեց իրեն, և նրանք զգուշությամբ իջեցրին ձիու աղբը:

ԾԽԱԽՈՏ

Պավլոն, որպես փորձառու մարդ, միշտ ավել ծխախոտ էր պահում մոլորվածների, իրենց մեջ պատերազմ ունեցողների ու չքնողների համար:

Նա ու Պատերազմ Մուկուչը այս էլ քանի տարի գիշերային բարեկամներ էին:

— Մենք էլ չլինենք, քեզ պես խեղճ սիրահարները ինչ են անելու:

— Ես ժամանակ չեմ ունեցել սիրահարվելու,— Մուկուչը տեղավորվում էր թաղիքի կտորի վրա,— իսկի քնելու ժամանակ չեմ ունեցել:

— Բոլորովին չես քնե՞լ:

— Չեմ հիշում, դա էլ չեմ հիշում:

— Բա ինչ ես հիշում:

— Ոչինչ չեմ հիշում,— հոգոց էր քաշում Մուկուչը, Պատերազմ Մուկուչը, որի դեմքը սպիներով էր պատած, այդ պատճառով մականունը կպավ ու մնաց:

Լուռ ծխում էին, աչքերն ու մտքերը գնում էին հեռուն, գամված հեռվին ու անորոշին: Որովհետև երկինքն աստղոտ էր, նրանք առնչվում էին աստղերի հետ և տիրանում բոլոր աստղերին: Մտքերի մեջ բոլոր աստղերը հավաքում էին մի տեղ աստղահունց սարքում իրենց տատերի քափահունցի պես:

(Օ՜, ինչ անուշ էր սարի քափահունցը, կրկենին, գաթան ու նապուկը):

Նրանք լռության մեջ բոլորին տիրանում էին, բայց երբ



խոսելու, արտահայտվելու առիթ էր լինում՝ դժկամությամբ էին աստղախմբերը բաժանում իրար մեջ: Ամեն մեկը իր օրինական պարտքն էր համարում բոլորը ինքը վերցնելու:

Մուկուչը գինով օրերին աստղերը Պավլոյին էր նվիրում, շռայլ ու բարի էր գինով գիշերներին:

Պավլոն քանի որ երբեք չէր խմում՝ պահպանողական էր և իր հաստատուն աստղախումբն ուներ:

— Լավ ես անում, որ գալիս ես:

— Մի օր, մի լավ օր բոլորը ետ եմ տալու... բայց էլի գալու եմ՝ անքնություն է: Պատերազմ է գլխիս մեջ, պատերազմի հետևանք է,— բառերը ծամել-ծխելով դուրս էր փչում Մուկուչը: Տղա էր, ռումբը պայթեց... քանի-քանի ռումբ պայթեց տղաների գլխին՝ չհասցրին անգամ սիրահարվել.

— Օրերը անցա՜ն, անցա՜ն, անցա՜ն...

— Բոլորը կտամ, մի լավ օր, բոլորը միասին ետ կտամ,— չհասկացվեց աստղերի մասին էր խոսքը, թե ծխախոտի, թե սպիների: Մուկուչը ծխի հետ կարեկցանք ներս քաշելով գնաց: Քաշեց ու գնաց: Ոնց որ հանկարծակի հայտնվում էր, նույնքան էլ հանկարծակի անհայտանում էր գիշերվա մեջ: Հետո ասում էր, թե գլխիս մեջ պատերազմ է, պատերազմի հետևանք է:

Առանց շարունակվել կտրվում էր Պավլոյի պատմության շառավիղը, կտրվում էր ետպատերազմյան շրջանի լուսնոտ Մուկուչի գալ-գնալուց հետո:

Շուտով Պավլոյի պահակության քսանհինգամյակը կլրանար, մի երեսնամյակ էլ կոլխոզում էր աշխատել, բայց մի կարգին դեպք չէր հիշում, որ նշեր, որ դեպքը այսօր շրջափելի կերպարանք ու գույն ունենար: Իր նման կիսաքանդ կամուրջի վրա պահակ էին դրել՝ զգույշ եղիր, պահպանիր կարևորություն ունեցող կամուրջը: Ինքն էլ պահպանում էր: Բանը հասել էր նրան, որ շփոթում էր՝ իր ստացածը պահակության վարձն էր, թե ծերության թոշակը:

«Պահակության վարձ, ծերության թոշակ... կարևոր կամուրջ»: Պավլոյի մտատանջության կլոր շրջագիծը գալիս, սրանց մեջն էր առնում: Շրջագիծը քանի գնում, մեծանում էր ու մեծ-մեծ էր պտտվում: Պտտվում էր, բայց երպի չէր հասցնում: Կամ հասցնում էր, բայց որովհետև Պավլոն կորցրել էր

հիշողությունը, մինչև լուսաբաց մոռանում էր: Շառն էլ էր մոռանում, բարին էլ: Մոռացությունն էլ էր մոռանում:

Ուզում էր մի կարգին երազ տեսնել, և քնից արթնացած ասլրել երազի քաղցր հիշողությամբ... ու երազը լիներ ջահել ու խենթ: Անպայման ուզում էր երազը կամուրջի հետ կապված լինի, էլ ուրիշ ինչ ունի աշխարհում, մի կամուրջ, որ ձգվում է գյուղից քաղաք, քաղա՜ք, քաղա՛ք... ինքը նստած, մնացյալ մարդիկ գալ-գնալու մեջ:

Հանգամանքների բերումով մայերն ու բեղերը չէին ճերմակել: Շատ վշտեր էր տեսել, բայց չէին ճերմակել: Մայերը անհաղորդ էին մնացել մարդուն, մոռացկոտությանն ու մենակությանը: Վշտադիմացկուն մայեր ուներ քեռի և լուռ Պավլոն: Հո բոլոր մահկանացուների մայերն էլ վշտադիմացկուն չեն, որ չճերմակեն: Մարդկային մայը շուտ է ճերմակում: Ինքն իրեն հուսահատվում ու ճերմակում է:

Դժվարություններ շատ էր կգում վերջին տարիներին. մարմինը դիմադրում էր ցանկություններին: Մի օր քիչ էր մնում ասի՝ ձեր կամուրջն էլ... բայց ինչպես սովորության գերի ամեն մարդ, Պավլոյի սիրտը չգնաց, ոտքերը հիվանդացան կեսճամփին և նրա կյանքը մշտական ու հավիտենական պահակություն դարձավ:

Քողտիքը այնպես էր սարքել, որ շատ տաքուկ չլինի: Ծեր մարդ է, արյունը թմրած, ով գիտե, չար սատանան մտնի մեկի մեջ և չար ձեռքը գա, բա Պավլոն մեռա՞ծ է... որ քսանհինգ տարվա հրացանը վրան ծիծաղի...

Մարդամոտ չէր: Մոտենում էին, ընդունում էր. մարդ իր հիշողության ծալքերում բոլորին տեղ է հատկացնում: Եվ բոլոր իր հետ կատարված պահերը կամա թե ակամա հանում շարում է կյանքի սփռոցի վրա: Իրեն հանդիպած ծանոթ ու հարապատ բոլոր մարդկանց էլ է մոտ կանչում, նստեցնում սփռոցով սեղանի շուրջը: Պատահում է դեպքերն են շատ լինում, պատահում է մարդիկ. դեպքերն ու մարդիկ կռիվ են անում, դեպքերը հաղթում են մարդկանց... պատահում է մարդիկ էլ են հաղթում դեպքերին... երկու դեպքում էլ մարդ մի քիչ ջերմանում է անցյալ կյանքի ծաղկապարդ սփռոցին ձեռք տալիս:

Պավլոն սովորել է՝ վիշտը ծխախոտ: Այնքան է սովորել, որ դա է համարում իր բաժին կյանքը, իր ապրելու շառավիղը: Կյանք է, տվել են, մի օր կառնեն: Սպասում է իր վերջին: Բայց ինչպես բոլոր մարդիկ, չի հավատում, որ իր վերջն էլ l. գալու: Հենց իր վերջը: Սպասում է և կրակ վառում: Կրակի վրա կարտոֆիլ է խորովում... մրոտ-մրոտ, տաք-տաք, մատնիրը վառելով, օխայ անելով ուտում իր կյանքի բարիք կարտոֆիլը... փխլիկ, համով, կլեպով... ինչքան էլ կլպես կլեպ կմնա, այդպես էլ չես հասկանա ինչ կլեպ էր, ինչու էր կլեպ: Չես հասկանա ու առանց հասկանալու կգլորես կյանքը:

— Քեռի, ինչ լավ կրակ ես արել:

— Մոտ արի տաքացի:

— Լավ կրակ է, կարտոֆիլ էլ կա:

— Մոտ արի կեր:

— Աստվածային կրակ է... էս կիսաքանդ կամուրջն էս ումից ես պահպանում:

— Էս կամուրջը բոլորինն է, բոլորի համար եմ պահպանում:

— Բոլորի համար, բոլորից...

— Դե մոտ արի բան հասկանամ:

Անծանոթը մթից ջոկվելով ու բարի զգացումներով համակված եկավ նստեց Պավլոյի կողքին ու ինչպես բոլորը... չէ,չէ, էս մեկն ուրիշ է.

— Ծխիր, քեռի, ծխիր...

Ինչ«Բելամոր», ինչ «Ավրորա», իսկական, հայկական, ամենահայկական «Սայլուտ»:

— Վախենամ չկարողանամ, ես միշտ...

— Ծխիր, ծխիր, ծխողները քեզնից լա՞վն են... մեկը ես:

Պավլոյի սիրտը բացվեց, վաղուց ոչ մեկը ծխախոտ չէր առաջարկել և չէր առաջարկել այդքան ջերմորեն:

— Լավն է չէ՞... հայկական է:

— Երևի արտասահմանների համար է:

— Հա, քիչ էր մնում մոռանայի, ձերը կոլխոզ է՞...

— Սովխոզ է, սովխոզ,— Պավլոյին լավ տրամադրություն էր ներշնչել «Սայլուտը», և Պավլոն հպարտությամբ նշեց, որ

գյուղում սովխոզ է, մեծ տնտեսություն է, առաջավոր, իսկ կարտոֆիլը Մարտունուց են բերում, նրանցը համով է:

— Էլ ինչ կոլխոզ, որ կարտոֆիլ չունի:

— Անասնապահական է:

— Սովխոզի դիրեկտորն էլ առաջավոր է, ասում են լավ մարդ է, «Սայլուտ» է ծխում:

— Հա, մեր Գերասիմն է:

— Ձերն է, հա՞, ասում ես, դե որ ձերն է...

— Հը, ինչ կա:

— Բան չկա, եկել եմ տեսնեմ ինչ կա, ինչ չկա:

— Բան էլ չկա:

— Ուզում եմ էդ չեղած բանն իմանամ: Ամեն ինչ ճիշտն իմանամ: Ուզում եմ մի կարգին բան գրեմ, վաղուց է կարգին բան չեմ գրել:

— Բացի գնացող եկողից...

— Ինձ հենց գնացող եկողն են պետք, գիշերն են գալիս, թե ցերեկը:

— Ձեռ քաշիր:

— Ասում ես ձեռ քաշեմ... որ բոլորը ձեռ քաշեն, որ բոլորը, բոլորը... քո պահակությունից պատմիր, այնքան երկնքին ես նայում, բան չէս զգո՞ւմ, ոչինչ չես զգո՞ւմ:

— Երկինքը բոլորինն է, մանավանդ որ սեփականություն չէ... երկինքը մեկ չի հասնի:

— Բա իմ բանը ոնց է լինելու:

— Է, անունդ չասացիր,— խուսափեց Պավլոն:

— Հասրաթ:

— Ես ինչ իմանամ, Հասրաթ, երկնքից հարցրու, ամենատես աչք է:

— Չէ, երկնքից հարցնելու բան չունեմ, քո կրակից եմ ուզում հարցնել, քո տաք կարտոֆիլից... երկրից եմ ուզում հարցնել, որովհետև ինչ կատարվում է, երկրի վրա և երկրի հետ է կատարվում:

— Դե գնա գյուղամեջ:

— Մութ բաները մթնով լավ են պատմվում, հիմա գեղամեջը դատարկ է:

— Անունդ էլ ասում ես Հասրաթ է:

— Դե ես գնամ, քեռի, բարի լուսաբաց:

Կրակն էլ խռռված հանգավ, չկերած կարտոֆիլներն էլ հանգած կրակի մեջ կնճռոտվեցին, կուչ եկան:

Պավլոն նորից մնաց մենակ: Մնաց ու «Սայլուտի» համը բերանում հայհոյեց Գերասիմին:

Լուսնյակը եկել, կիսել էր երկինքը: Ինտելեկտուալ թախիծ չկար ու ճիվաղային անմտություն: Լուսնյակի մեջ լույս կար, մարմին, հացի կարոտ, կանացի քչփչոց ու փեսայի ծիծաղ, խնոցու խշշոց ու թարմ կարագի բույր: Լույսը իմաստուն էր, կյանք տեսած էր, իսկ կյանքը լիքն էր և հմայում էր կնոջ պես: Կյանքը քչախոս ու տաք էր, ոնց որ կարտոֆիլ: Կյանքը պահակություն չէր կամուրջի գլխին:

Հանկարծ մի անիրական ստվեր Պավլոյին վախեցրեց: Թվաց, թե ստվերը եկավ ու անհետացավ: Եվ սարսափելի մեծ էր այդ ստվերը և սարսափելի թշնամական:

— Ինչ գյուղ, ինչ կարտոֆիլ, ինչ սովխոզի դիրեկտոր, ինչ լրագրող, ինչ սովխոզ...,— Պավլոն ցավ կգաց, ուզեց փամփուշտները դատարկել մթության մեջ, բոլոր մթությունների մեջ, ում ուզում է, թող կպչի, մի օր եկել է, մի օր պետք է գնա:

Նրան թվաց մեկը գաղտագողի մոտենում է, նորից են նույն ստվերն է մոտենում, որ սարսափելի մեծ ու սարսափելի թշնամական էր, և դեղին աչքեր ուներ, և այդ մեկը չար մտքերով էր մոտենում, և ձեռքին ինչ որ բան ուներ, և այդ ինչ-որ բանը ողջ կյանքում դաղել էր ծեր Պավլոյի սիրտը, աչքերը, մարմինը, շուրթերը, քիթը,քիթը, քիթը...

— Ծխախոտս հանգավ,— միայնակ տան մեջ վայ արեց Պատերազմ Մուկուչը: Կամուրջի մոտ լապտերներ հավաքվեցին, վառվեցին ու հսկայական թշնամական ստվերներն սկսեցին պտույտ գալ, աղաղակել ու կանչել: Լապտերներն ահ ու դողով ու կաշկանդված աչքով էին անում, թե ով էր ում պատասխանում՝ Պավլոն Գերասիմին, թե Գերասիմը Պավլոյին՝ հայտնի չէր, միայն ինքնաշեն քողտիկն էր միտք անում քանդվող կամրջագլխին, իսկ անորոշ մտքերը ծղոտների պես կախ էին ընկել Պավլոյի քուրքի բրդերից:

— Չեղավ, քեռի Պավլո, չեղավ, քնում ես,— հաճույքից խռպոտած ձայնով աստված գիտի որտեղից վերադարձող Գերասիմը կուշտ-կուշտ ծիծաղեց,— երևում է քեզ թոշակի ենք ուղարկելու:

Պավլոն հիմնավորապես սթափվեց՝

— Չե, Գերասիմ ջան, տանը մնամ ինչ անեմ...

Հանգած կրակի մոտ աղավաղված մի բերան ճիգ էր անում ժպտալու:

Չէր հասկացվում Պավլոն է՞, թե Գերասիմը:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

— Իմ անունը Կարեն է,— վրա տվեց տղան, որ ակնոցներ էր կրում և ուզում էր օդաչու դառնալ:

Կինը հիշում է ակնոցավոր այդ տղային և հոգին լավանում է:

«Վերջիվերջո մահ է, երբ ոչ ոք չի նայում»:

Կարենը գնաց, որ պատահաբար նորից հանդիպի: Կարենը հրաշալի դեմք ուներ: Կինը ուզում է մոռանալ այդ ակնոցավոր տղային, որովհետև ամուսինը հիվանդ է և կարոտ է խնամքի:

Ամուսնու մապակալած, տարօրինակ դեմքը...

— Ճնճղուկը ուզում է թիթեռին բռնել,— լուսամուտից նայելով ասաց տղամարդը:

— Դեղ կբերեմ, ամեն ինչ կանցնի,— ասաց կինը:

Տղամարդը մոտ եկավ, և նրա աչքերն ասացին.

— Ներիր, ես երբեք քեզ ուշադիր չեմ նայել:

— Պետք չէ,— կինը փախավ փողոց, գլորվեց մայթով, հասավ դեղատուն:

— Խնդրեմ, ասացեք, կա՞...

Կլոր ապակու տակից դեղատումը ետ եկավ: Կինը կորցրեց հայացքը, ձեռքերը, կանգնելու ձևը.

— Խնդրում եմ, գուցե...

— Տիկին, ասացինք չկա:

Պատասխանի չարությունից երերաց:

— Ես երբեք չեմ կարծել, որ մարդիկ ու դեղերն այդքան պակասել են: Երբ փողոցներ փախան ոտքերի տակից, ու հայացքի դեմ էլ դեղատուն չմնաց, կինը նստեց մայթին.

«Գնամ ինչ ասեմ... մայթեր, չոր-սառը մայթեր, տրորված-խոնարհ մայթեր, կանաչած-ջահել շիվեր, գնացող-եկող մարդիկ, գլորվող-կանգնող անիվներ, խառնված-փոքրացած փողոց, շուռ եկած-մոլորված աշխարհ»: Եվ առաջին անգամ երապեց դեղագործ լինել:

«Կյանքը շերտավոր է և նման է վագրի: Շերտերի արանքին մեկ ու մեջ լույս կա»:

Տարիներ առաջ ինքն ու ամուսինը անգործ էին և ապրում էին հավասարը հավասարի հետ: Անցան այդ աղքատ ու շքեղ տարիները: Հիշեց, որ դեղ չի ճարել:

«Այս սիրուն, ուրիշի աշխարհը, այս ցնդած ու խելոք մարդիկ»: Նա փակեց կարմրած աչքերը.

«Ոչ, ոչ, սիրելիս, այնքան հին են մեր կրույցները... ասա, որ հարկավոր է արվեստը թափ տալ, որ ուզում ես ինչ-որ բան շուռ տալ:

Երկինքը սկսեց անձրևել: Երկնքի ծառերը ճերմակել են, որ պտուղ տան: Ես ջահել չեմ, ինչպես կարող եմ ծառերին նայելով չտխրել:

Վարագույրից դուրս եմ նայում, ոչինչ չի փոխվել երեկվանից, վիրավոր սարյակը սառել է նույն տեղում... Կարծիքս փոխում եմ երեկվա մասին՝ ցուցափեղկի պես ամեն ինչ ցուցադրում է, գոնե մեկ ու մեջ թագցներ... պոռոտախոս մտքերի միակ գերեվմանը գիշերն է... պառավները ժպտալով կարծում են կնորանան: Ծերուկը այս ցրտին պաղպաղակ է ուտում, իսկ սառած ոսկորները կնգում են: Մեկը վաստակավոր փորը դեմ տված՝ ճեղքում է օդը. Թատրոնի բազմավաստակ դերասաններից է...: Աշխարհ, նա հիմա մենակ է, ես նրա հետ չեմ, և ընդհանրապես ոչ ոք նրա հետ չէ, թեև նա լավ է նկարում և գիտի, աշխարհ, որ քո վերջը փրկությունն է, իսկ իր վերջը կործանումը»:

— Արդեն ուշ է, գնացեք տուն, և ընդհանրապես, չեմ հասկանում ինչպես կարող է քաղաքակիրթ տիկինը նստել թաց մայթին,— ասաց մյուսներին չնմանվող միլիցիոնները:

Կինը տեղից բարձրացավ ու շշված ոտքերը քարշ տվեց: Հետո պոկվեց ու վազեց: Միլիցիոնները հոգեկան հիվանդի տեղ դրեց նրան:

Կինը պիտի անցներ, պիտի չտեսներ անցորդներին, խելագար մեքենաներ, խելագար վարորդներով: Պիտի ինքը լիներ իր ոտքերի, կախ սրտի ու վշտահար ուղեղի հետ: Վազեց, վազեց այնքան անտարբեր, որքան անտարբեր նստել էր, մայթերը գլորվեցին ոտքի տակ և վախով մեխվեցին տան շեմքին:

Տղամարդը կարմրած աչքերով նայեց ու ասաց.

— Ես աղմուկ լսեցի, ես կարծեցի բան է պատահել:

— Դեղ չկար:

— Գիտես, ճնճղուկը թիթեռին կերավ:

— Դեղ չկար,— չոր պնդեց կինը:

— Հոգնել-թրջվել ես:

Այստեղ կինը, և սառը-տրորված մայթերը, կանաչած-ջահել շիվերը, եկող-գնացող մարդիկ, գլորվող-կանգնող անիվները, խառնված-փոքրացած փողոցը, շուռ եկած-մոլորված աշխարհը ասացին՝ ներիր...

Ակնոցավոր տղան դարձավ սոսկ մի գույն: Կինը բռնեց ամուսնու ձեռքը և նրան թվաց, որ երկու տարբեր, բոլորովին տարբեր աշխարհներ, որ մի ժամանակ հարապատ էին, նորից են հարապատանում:

Ժամանակը սողալով է անցնում նստող-սպասողների համար, երանի չնստողներին. կնոջ համար ժամանակը թռչում էր:

— Սիրելիս, ոչ մի դեղատնում չկար քո դեղը,— վերջապես փլվեց կինը:

— Այդպիսի դեղ երևի չկա,— խորիմաստ եզրակացրեց ամուսինը:

Կինը զգաց, որ կորցնում է: Տղամարդը զգաց, որ կորցրել է: Եվ ափսոսացին, և՛ տխրեցին, և՛ հասկացան իրար:

— Ներիր ամեն ինչի համար:

— Դու միայն առողջացիր, ներելը, ներվելը դատարկ բաներ են...

Մենք երբեք դա չենք զգում, երբ առողջ ենք, կաթ տաքացնե՞մ...

— Ներկերս բեր:

— Ես քեզ սիրում եմ:

Եվ օրինական ամուսինները կյանքի բեռի տակ բարեկամացան...

Սարսափը համախմբում է ցրված զգացմունքները:

ԾՏԻ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԾԻՏՆ ՈՒ ԵՐԿԻՆՔԸ

Ճուտիկը տեսավ երկինքը շարժվում է, մոռացավ բարև տալ: Երբ նայեց ծառից ներքև՝ երկինքը կանգ առավ. մինչև հիմա էլ վարմացած վեր ու վար է անում՝

— Ողջույն երկինք:

— Ողջույն հող:

ԾԻՏՆ ՈՒ ԲՈՒՅՆԸ

Հավաքում, խոտ ու փետուր է կցմցում. բույնը ծտի սրբությունն է, որ քանդեն՝ կհյուսի: Երբ ցրտեր են ընկնում, ծիտը չվում է տաք տեղ և մոռանում է իր հին սրբությունը: Նա նորն է հյուսում՝ համառություն է:

ԾԻՏՆ ՈՒ ՁԱԳԵՐԸ

Երբ ձագեր է հանում, մինչև նրանց կեր ճարելը ինքն է կեր ճարում: Բայց երբ անցնում է տարին, նոր ձագեր է հանում, նա մոռանում է հներին՝ թռչնություն է:

ԾԻՏՆ ՈՒ ԾԱՌԵՐԸ

Այս տարի շատացել են ծտերը: Քաղցած ժամանակ թռչում են, կուշտ ժամանակ կանգնում: Տղաները պարսատիկով «կրակում» են և կլորացած ծիտիկները թմփում են. ծտերը մեռնում են ծառերի տակ:

Տղաները հավաքում, փետրած ծիտերին շարում են շշերի վրա և ծտախորոված բույրը բռնում է քթերը: Այս տարի երևում են այն ծտերը, որոնք անցյալ տարիներում փրկվել են, և նրանք, որոնք դեռ ձագ են: Զարմանալի կերպով շատ են այդ ձագերը՝ խաղաղ օրեր են, բազմանում են: Ծառերը սկսել են բողբոջել: Հին տերևները չեն պոկվել, նորերը առանց ճչոցի են հրաժեշտ տալիս գնացողներին. տերևները պարելով են ընկնում:

Այսօր նրանք պրուցում են:

ԾԻՏՆ ՈՒ ՀԻՆ ՏԵՐԵՎԸ

— Բարև, հին տերև:

— Բարև, ծիտ:

— Ինչու ես կծկվել:

— Աշուն է, պետք է մեռնեմ:

— Մեղք ես:

— Ինչու եմ մեղք, մարդիկ էլ են այդպես:

— Դու ոչինչ չես տեսնում:

— Ընդհակառակը, ամեն ինչ հասցնում եմ տեսնել՝ հողի կանաչելը, պտուղը, իսկ մնացածը ամեն տարի ու ամեն տեղ նույնն է:

— Եթե դու ամեն ինչ տեսնեիր, անունդ մարդ կլիներ:

— Կարծում ես մարդիկ տեսնո՞ւմ են ամեն ինչ, նրանք հենց չտեսնելուց են երկար ապրում:

— Ես էլ եմ ուզում տերև դառնալ:

— Կձանձրանաս, չես դիմանա, տերև մնալը հեշտ չէ:

— Գնաս բարև:

— Մնաս բարև... հողը կանաչել է, անհարմար եմ զգում խշշալով իջնել կանաչի վրա:

ԾԻՏՆ ՈՒ ԲՈՂԲՈՋԸ

Բողբոջները բացվում էին, և ծիտն ասում էր.
— Բարև, բողբոջ:
— Բարև:
— Իմ անունը ծիտ է:
— Գիտեմ, դու նոր կրուցում էիր իմ պապի հետ:
— Ես նրան ճանապարհ էի գցում:
— Նա ընկավ, որովհետև ես էի ծնվում:
— Հպարտացիր նրանով:
— Ես հպարտանում եմ քո հարևանությամբ:
— Շնորհակալ եմ, բողբոջ, երբ մեծանաս, ավելի լուրջ բաներից կկրուցենք:

ԾԻՏՆ ՈՒ ՆՈՐ ՏԵՐԵՎԸ

Բողբոջը բացվեց, մեծացավ և տեսավ ծառերի իմաստությունը. նրանք կանգնած են դիմանում:
— Բարև, ծիտ:
— Բարև, տերև:
— Ինչպե՞ս ես:
— Սկսում եմ տխրել:
— Որովհետև անունդ ծիտ է, և չգիտես ապրելու ձևը: Այ, ինձ նման գիշերվա ցող խմիր, չես տխրի:
— Գիշերվա ցողը շատ է, ինձ մի կաթիլն էլ հերիք է:
— Շատ տեսնում ես, քիչ վերցնում՝ այդ պատճառով ես տխրում:

ԾԻՏՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի մոլորված մարդ հենվեց ծառին: Նա ծխում էր: Ծիտը տխուր էր, այդ պատճառով կրույցի բռնվեց.
— Բարև, մարդ:
— Բարև, ծիտ:
— Հարգանքով խոսեք, իմ անունը մայր ծիտ է:

— Բայց քեզ բոլորը ծիտ են կանչում:

— Բոլորի հետ գործ չունես, դու մարդ ես:

— Բարև, մայր ծիտ:

— Այ, հիմա լավ է, մարդը պետք է մարդավարի խոսի, առանց ծլվլալու, առանց սվսվալու:

— Դժվար է և տխուր:

— Ինչու՞:

— Որովհետև...

— Այդ բոլորը շատ հին է:

— Երանի քեզ:

— Ինչո՞ւ...

— Ուր ուզես, կթռչես:

— Քեզ երանի, որ իմաստուն ես:

Ծիտը թռավ գնաց շրջելու աշխարհը:

ԾԻՏՆ ՈՒ ԳԵՏԸ

Կյանքի սահմանափակության մեջ գետը ծտին անսահման թվաց.

— Ինչ լավ ես քչքչում:

— Ես ծեր եմ, չեմ քչքչում, հանդարտ հոսում եմ:

— Ինչ շատախոսն ես:

— Դա իմ բնական վիճակն է:

— Բա հիմա ո՞ւր ես գնում:

— Արի, կտեսնես:

— Հեռու՞ է:

— Չէ, շուտով կհանգստանամ, հոգնել եմ հոսելուց:

— Բոլորն էլ հոգնում են:

— Չեն հոգնում, մեռնում են:

— Մեռնողները հանգստանում են:

— Հասանք:

Ինչ հրաշալի երկի՜ր է...

Եվ գետը առանց մնաս բարև ասելու թափվեց, կուլ գնաց ծովին: Եվ որովհետև ափին կանգնած ծիտը շրջելով իմաստություն էր սովորել, եզրակացրեց՝ գետերը մեռնում են ծովերի մեջ: Հետո նա սկսեց հաշվել իր սովորած իմաստությունները. ծտերը մեռնում են ծառերի տակ:

Տերևները ընկնում են պարելով:

Խեղճ ծիտը այդքան ծանր իմաստություններից գլխապըտույտ կգաց... ընկավ ծովը...

Մայրամուտից կարմրած ծովը հանդարտ օրորում էր ծտի իմաստությունը:

ՊԱՐՏՔ

Ես պարտք եմ իմ մորը, հորը, մեր բարեկամներին, մեր գյուղին ու մեր աշխարհին: Պարտք եմ, որովհետև մեծացրել են ինձ ու տվել ինչ-որ բաներ: Մայրս, հայրս, մեր բարեկամները, հարևանները, մեր գյուղն ու մեր աշխարհը պարտք են ինձ, որովհետև չեն տվել բոլոր այն ամենը, ինչ կկրացներ իմ մարդ լինելը:

Ճիշտ այդպես էլ ինձ պարտք է Արիսը:

Սրճարանի նորաձևությունն ու փափուկ աթոռները չեն գրավում մեզ: Սառել է սուրճը, որովհետև վիճել ենք բոլորովին էլ ոչ տեղին: Վիճել ենք, որովհետև մարդ իրենից երբ դժգոհ է՝ հնարում է առիթ:

Արևը խաղում է ապակիների հետ, շողը մտնում է բաժակի մեջ՝ լուսե մատներով խառնելով մեր հոգու մաքրությունը: Մենք լուռ ենք, ոնց որ սառած սուրճով լի ճերմակ բաժակներ:

... Ես կիսատ եմ շատ տեղերում, շատ բաներում, և այդ կիսատության համար պարտք են ինձ, կիսատության համար եմ տխուր: Փոխադարձ կախվածության, կապվածության համար, և պիտի որքան հնարավոր է՝ մարեմ պարտքերս:

Նայեցի Արիսին, Արիսը դեռ կարդում էր թերթի չորրորդ էջը:

— Երբ դու խոսում ես, հանգստանում է խիղճս:

Նա նայեց գորշ, հաճելի հեղուկով սուրճի բաժակին ու ասաց.

Ուշանում եմ:

Մնացի ծանոթ փողոցներում, փողոցները իմ ընկերներն են: Քայլեցի անձրևի տակ, ոտքերս սահեցնելով ջրերի մեջ ու մտածեցի բարի ու ամեն ինչ տանող Արիսի մասին: Հետո հիշեցի ծերուկին.

«Հիմա կգնամ, կբացեմ դուռը, ծերուկը նստած կլինի իր հին աթոռին ու չիբուխ կծխի, հետո կբարձրանա տեղից, կշփոթվի ու կնստի տեղը, հետո ես կասեմ՝ կարոտել եմ»:

Ես պարտք եմ նաև ծերուկին:

— Ես եկա կառիթափ փողոցով, ուր տների պատուհանները պինդ փակված էին:

Մաշված տան առաստաղից պոկված դեղին կաթիլը մեխվում էր բաժակի մեջ, տան հատակը կոպիտ ու հին էր, բայց ներկված, որ ծածկում էր հնությունը: Ծայրամասի տան մեջ չկար ոչ մի շող: Պարզապես կաթիլը գիտեր, որ ներքև է ընկնում, իսկ բաժակը չգիտեր, թե ինչու է լցվում:

— Ինչպե՞ս ես...

Հարցերը խցանվել էին, և գարնան անձրևը թվում էր տեղին: Մեկիս չոր մատներում սպասման կրակը հանգել էր, մեկիս երակներում վազում էր:

— Հանդիպումներ կան ու կա անձրևաջուր:

Պատուհանը բացել էր աշխարհի կողերը, իսկ մենք հայացքով գրկում էինք այդ աշխարհն ու խտուտ տալիս: Իսկ կառիթափով անձրևաջուրը տիղմ էր քշում:

— Ոնց որ դու...

Ծերուկի վերջը՝ հին առաստաղով տունն էր քաղաքի ծայրամասում, իմ վերջը՝ նոր մի տուն, որ ոչնչով չէր փոխի իմ կյանքի ընթացքը:

— Այսօր ավտոբուսի ցնցումից մեկի հաստ պորտֆելն ընկավ:

— Տերը կարող էր ավելի հասարակ բաներից ընկնել:

Զրույցը ձգվեց գարնան անձրևի պես, բերելով տիղմ-հուշեր, որ եկան դեմ առան ծերության պատին:

— Այլևս չեմ փնտրում:

— Իսկ ես դեռ քո կանգառը չեմ հասել, բայց հասնելուց հետո չգիտեմ ինչ կանեմ...,— մենք հիշեցինք բոլոր կանգառների պատմությունները:

Տան անկյունում պղտոր բաժակը լցվում էր:

— Դու եկար անձրևի հետ, նրա պես էլ կգնաս, իսկ բաժակը քեզանից հետո կշարունակվի դեռ լցվել:

Ծերուկի գլուխը կոտրած ճյուղի պես կախ ընկավ:

Աշխարհը եկել նստել էր նրա տան մեջ և նեղացել էր այնքան, որ մի անպգույշ բառից կարող էր ճաքել:

— Համենայն դեպս պորտֆելն ընկավ ավտոբուսի ցնցումից:

Ես այլևս չդիմացա, նրա կնճիռներով ակոսված դեմքին ճպճպում էին ճերմակ արցունք երկնած աչքերը:

Գարնան անձրևը նվոցով սղոցում էր լռությունը:

Երբ հեռվից ետ նայեցի՝ ինձ թվաց լուսամուտին հենված ծերուկը քարակոփ մի քանդակ է քարե պատվանդանին:

Խենթացած վագեցի չփչփացնելով անձրևաջուրը: Կարոտել էի վիրավորված ինքնասիրությամբ թերթի չորրորդ էջը սերտող Արիսին: Կարոտեցի առավոտվա սրճարանին, սեղանին ու սուրճ բերողին: Կարոտեցի, թեև գիտեմ, որ Եվրոպան և աշխարհի մնացած մասերը կառիթափ են ապրում ինչ-որ կարևոր մի կետում, որից այն կողմ դատարկություն է: Այսօրվա իմ վերջը ջրափոս էր՝ մեջը լիքը ճոճվող արև, իսկ ծերուկի վերջը ջրափոս էր՝ առանց արև:

Ես չեմ հաշտվում ճոճվող արևների, փոխադարձ կախվածության, կապվածության ու պարտքի հետ. ես պարտք եմ ծերուկին: Արիսը պարտք է մեզ երկուսիս, այդ պատճառով ես վազում եմ նրա մոտ, որ պարտքերը մարենք: Ես վազում եմ, որ պատմեմ միակ սիրո ու միակ փրկության մասին:

Արիսը նորից կարդում է թերթի չորրորդ էջը:

— Մի ուշացիր,— համարյա ճչում եմ ես:

— Կարծեմ դու ես ուշացել,— ասում է բնական ու հանգիստ:

Նա պարտավոր չէ հասկանալու իմ խենթ միտքը, թերթը ցած է դնում, որ միասին ուտենք հաց ու երշիկ:

Եվ կյանքը շարունակում է փորփրել իր բացած հունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևան 3
Հեքիաթները պարտվում են 4
Պոետը թող գրի իր սոնետը 7
Պատ, սիրելիս . . . 10
Կատվաբանություն . . 13
Տարակուսած Բոբին . . 16
Պետք է նորոգել աթոռը . 21
Պատառ-պատառ երկինք . 24
Նախապգացում . . . 28
Տենդ 33
Կանաչ շիվ 39
Փողոցի մեջտեղով . . 43
Փլված առաստաղ . . 48
Ճանապարհի սերը . . 55
Ձիու աղբ 61
Ծխախոտ 66
Սովորական պատմություն 74
Ծտի իմաստությունը . . 78
Պարտք 82

Джулет Аветиковна Матинян
МАЛИНА
(Рассказы)
На армянском языке
Издательство «Советакан грох»,
Ереван, Теряна 91

Խմբագիր՝ Լ. Ծ. Դուրյան: *Նկարիչ՝* Ա. Ա. Հայկազյան: *Գեղ. խմբագիր՝* Ան. Վ. Գասպարյան: *Տեխն. խմբագիր՝* Կ. Գ. Սարգսյան: *Վերստուգող սրբագրիչ՝* Ա. Ս. Աբրահամյան

Հանձնված է շարվածքի 6/V—1976 թ.։ Ստորագրված է տպագրության 30/IX 1976 թ.։ Թուղթ № 1 84×108 1/32 տպագ. 2,75=4,62 պայմ. մամ., հրատ. 3,25 մամ.։ Պատվեր 39 ՎՖ Տպաքանակ 10 000, գինը 14 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 9, Տերյան-91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета Совета Министров Армянской ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.